№ 5 (106) X ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ 1900

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԴԻՊԻ ԵՐԿԻՐ

Ամէն տեղ է որոնում հայը ապաստան
Բացի այն երկրից, որ կոչւում է Հայաստան:

—

Գնում է հայը՝ կնճիռը ճակատին, յոյզը սրտում:
— Ո՞ւր, հայ շինական:
— Ղարիբութիւն:

Գնաց: Իսկ այնտեղ, Խնուսի կիսաւեր գիւղերում, պառաւ մայրը՝ մէջքը կորացած, հալումաշ կինը՝ ծծկերը գրկին, և չորս մատղաշները՝ բոբիկ և ցնցոտիապատ, նրան են սպասում: Նրան են սպասում, երբ պարտատէրն է դուռը բաղխում կամ երբ հարկահանը՝ որոտալի ձայնով՝ շանթ ու կրակ է թափում: Երեխաների կանչը՝ „հա՛ց" և դատարկուած գոմից նւաղած եզան բառաչիւնը՝ „խոտ" — դադար չունի: Տաշտում՝ հաց, գոմում՝ խոտ չկայ, — նրան են սպասում: Դիշերը անձրև եկաւ, հողը փափկեց, արտը վարող չկայ. նրան են սպասում: Տանեցու աչքը ջուր կտրեց: Պառաւ տատը թոռների բողազից կտրեց՝ ձէթը ժամ տարաւ, լուս վառեց — բայց էլի խաբար չկայ: Ու ժամից դառնալիս՝ իր ցաւը նա այսպէս երգեց՝

Տուն կայ՝ պուղ չկայ,
Արտ կայ՝ վարող չկայ...

—

Գնում է հայը՝ վէրքը ճակատին, երկիւղը սրտում:
— Ո՞ւր, հայ երիտասարդ:
— Օտար աշխարհ:

Եւ Եգիպտոսն ու Կիպրոս, Կովկասն ու Բալկան հերիք չեղան հալածական պանդխտին: Ծովեր անցաւ, մինչև Ամերիկա հասաւ: Օտար աշխարհում՝ նրա լեզուն բացւեց. ցոյց տուեց իր մարմնի վէրքերը, սրտի խոցերը: Անպաճոյճ, բայց յուզիչ լեզուով պատմեց ծերուկ հօր սպանութիւնը՝ կաթւածահար մօր առաջ, մատաղ քրոջ փախցնելը. նկարագրեց հարևանի թալանը, ամբողջ գիւղի աւերումը և իր յուսահատ փախուստը: Մարդիկ յուզւեցին, կսկծացին: Փախստականին ապաստան տուին, քաջալերեցին: Բայց նա ոչ առաջինն էր և ոչ վերջինը: Օր չանցաւ, որ պանդուխտ չգար: Ամիս չանցաւ, որ նոր քարվան չերևար: Հները նորերին գրաւեցին: Օտար աշխարհի ճամբան՝ ջրի ճամբայ շինեցին: Գիւղ չմնաց առանց փախստականի, օջաղ չմնաց առանց զարիբականի: Եւ ծերունի պապը՝ մարած օջաղի մօտ նստած, արտասուքը սրբեց ու հանգած օդային այս գանգատը ուղղեց՝

Մառ ունինք՝ մառկալ չունինք,
Ընտանիք ունինք՝ ջահիլ չունինք...

—

Գնում է հայը՝ բողոքը ճակատին, վրէժը սրտում:
— Ո՞ւր, հայ հայրենասէր:
— Ազատ երկիր:
— Ինչո՞ւ համար:
— Գործելու համար:

„Այնտեղ, ազատների երկրում, ուր չեն կտրում այն հոկորդը՝ որ բողոք է հնչեցնում, և այն ձեռքը՝ որ ըստրուկի շղթան է փշրում, այնտեղ մենք բարձրաձայն քարոզով վառ կը պահենք համազգային վրէժի սրբազան կրակը՝ իբրև վերջին աւանդ անմեղ զոհերի. այնտեղ՝ ինչպէս մարմնացած բողոք՝ կը պատկերացնենք դիածածկ հայրենիքի սարսափները — սարսափներ, որոնց հարիւրերորդ մասը անգամ չգիտէ քաղաքակիրթ աշխարհը. ազատ ու անկախ այնտեղ մենք կուսումնասիրենք հայրենիքի փրկութեան ճանապարհները, կը կըրթենք և կը պահպանենք տարագիր մատաղ հայ սերունդը օտար ազդեցութիւնից. այնտեղ, զգայուն մարդկանց առաջ, որոնք լսել զգալ, ցասման որոտ արձակել գիտեն, մենք բաց կ'անենք նահատակ ժողովրդի սիրտը, շանթ ու անէծք կը թափենք, մինչև որ արար-աշխարհ տակնուվրայ կը լինի, մինչև որ մի ոևէ տեղից մեզ օգնութիւն կը հասնի":

Ու գնաց: Նա մենակ չէր: Նրան հետևեցին ընկերներ, ծանօթ ու անծանօթ գործիչների ամբողջ խմբեր, տարբեր ծրագրերով, տարբեր ճանապարհներով: — Սկսեցին լրագիրներ, հանդէսներ, հիմնեցին դպրոցներ՝ ընկերութիւններ. տեղի ունեցան ժողովներ, մերկացումներ, վերջապէս աղերսանքներ, դիմումներ: Եւրոպա, Ամերիկա, նոյնիսկ ստրկութեան երեկւայ հայրենիքը, փարաւոնների երկիրը՝ լեցւեց ազգի ցաւը լացող գործիչներով ու բողոքողներով: Միայն երկիրն էր, որ մնաց առանց բողոքի, առանց գործողների: Եւ այն ժամանակ, երբ օտար աշխարհում՝ ազգասիրական հողի վրայ բուսած ազնուկն և իրարանցումը սաստ-

կանում էր՝ վերածելով հայրենիքի ու գործի ընդհանուր շահերը խմբական և նոյնիսկ անհատական մանր հաշիւների,—նոյն այդ ժամանակ՝ երկրի մէջ լռում էին բողոքի բոլոր կենդանարար ձայները, հանգչում ապստամբութեան խարոյկները՝ վառուած անթիւ զոհերի աղատասէր շունչով։ Երկրի խորքում՝ կուռող չմնաց, ժողովրդի առաջ՝ բողոքող։ Եւ Մուշի դաշտի կիսաւեր գիւղերում, յուսաբեկ, մոռացուած, անընկեր մնացած մարտիկը՝ գիւղի աշուղին կանչեց և խնդրեց այսպէս երգել իր ազգի վիշտը՝

Ճրագ կայ՝ վառող չկայ,
Ժողովուրդ կայ՝ սիրտ տուող չկայ...

—

Խե՜ղճ ժողովուրդ...

Ամէնքը գնացին։ Մէկը իբրև բողոք՝ քանդուած օջաղի, միւսը՝ հարստահարուած աշխատանքի, երրորդը՝ հալածական գաղափարի։ Գնացին, որ աղերսեն, վկայեն անսիրտ, կուրացած աշխարհին քո վիշտը, տառապանքը, քո յուսահատ վիճակը։ Իսկ դու՝ որբական մենակութեան մէջ՝ սպասում ես խաբրիկների, օգնութեան, ազատութեան...

Գնացին և էլի գնում են...

Ցիսուն հազար գաղթականներ Կովկասում, որոնք 5 տարուց իվեր մի անկիւն անգամ չունեն իրենց յոգնած գլուխը վայր դնելու համար. անթիւ, անհամար հալածականներ Եգիպտոս, Կիպրոս, Ամերիկա, Եւրոպա՝ ցնցոտիապատ, թափառական, անտուն, անտէր՝ իբրև անխօս կենդանագիր հայրենիքի թշուառութեան. ցիրուցան որբեր Հայ աշխարհի բոլոր ծայրերից և այդ բոլորի հետ միասին՝ ամբողջ Հայաստանի մտածող, յեղափոխող տարրը՝ ուսուցիչ, քարոզիչ, գրող, կուռող, յեղափոխական, վարդապետ, ինտէլիգէնտ—բոլորն էլ երկրից դուրս, բոլորն էլ թափառական, աղերսանքը բերանին, ձեռքը մեկնած...

Որպի՜սի դարձ։

Պատմական վիթխարի դէպքերը միմեանց յաջորդեցին, մենք արեան գետեր տուինք, մեր նահատակների թւով աշխարհ դղրդեցրինք, իսկ այժմ... Այժմ արեան փոխարէն արտասուք ենք թափում, բողոքի տեղ՝ աղերսանք։ Ժողովուրդ և հայրենիք պաշտպանելու փոխարէն՝ մեր թշուառ գոյութիւնն ենք պահպանում. թշնամու տեղ՝ իրար հետ ենք կռւում։ Եւ կամ մեր խիղճը խաբելու համար, այն միջոցին, երբ ամբողջ Տարօնում մի հատ դպրոց, մի այբբենարան չի մնացել, հայ հայրենասէրները օտար երկրներում թերթեր են տպագրում, ճառեր են ասում, նոյնիսկ դպրոց և ժողովարաններ են հիմնում։ Հայաստանը—փոքր այս նոր գիւտին — օտարութեան մէջ են փնտռում, իսկ նրա ապագան՝ աղերսանքների և տարագրութեան մէջ։ Եւրոպան կշտացաւ, նոյնիսկ „յոգնեց“ մեր լաց ու կոծից, մեր ցնցոտիներից, իսկ մենք՝ ինքնախաբէութեան դիմակի տակ՝ շարունակում ենք թափառել և աղերսել, աղերսել և թափառել.

Ժողովուրդ էինք՝ թափառական դարձանք,
Կուռողներ էինք՝ աղերսողներ դարձանք...

—

Կա՛ց, հայ ժարդ, կա՛ց։

Դա չէ այն ճանապարհը, որ տանում է դէպի փրկութիւն։ Ազատագրական արիւնը չէ, — նոյնիսկ այնքան սոսկալի, ինչքան „հայկական կոտորածները“, — որ սպանում է մի ազգ, այլ թափառական կեանքը, մուրացկանի պայուսակը, անվերջ տարագրութիւնը։ Մի մոռացիր, որ քսան տարուց աւելի է ինչ օսմանեան բռնապետութիւնը և՛ հրդեհաձգութեամբ, ինչպէս վանում, և՛ սովով, ինչպէս վասպուրականում, և՛ կոտորածով, ինչպէս ամբողջ Հայաստանում, մի նպատակ միայն ունի, վերացնել, նուազեցնել հայերին, դարձնել Հայաստանը ա ն հ ա յ ա բ ն ա կ, որպէսզի այդպիսով վերջապէս մի ծանր գ ե ր ե զ մ ա ն ա ք ա ր դնի այն մեծ, ոգևորիչ հարցի վրայ, որ 22 տարուց իվեր զբաղեցնում է ամբողջ Եւրոպան „Հայոց հարց“ անունով և որը 600 տարւայ ստրուկ ժողովրդի սրտում ծնել է և՛ յոյս, և՛ հերոսութեան ձգտում, և՛ ժարդկային մեծ իդէալներ...

Այո՛, իդէալներ, որոնց իրագործման համար հայութիւնը միայն մի վայր ունի—Հ ա յ ա ս տ ա ն։ Մայր-հայրենիքից դուրս՝ հայ ժողովուրդը ազգ չէ, այլ փ շ ր ա ն ք, թ ա փ թ ը փ ո ւ կ, անպէտք և անկարևոր։ Երկիրն է նրա պատմական դերի բ ե մ ը, նրա կուլտուրական բաղձանքների հ ն ո ց ը։ Թափառական, շրջիկ կեանքը, տարագրութիւնը սպանեց հրէական տաղանդաւոր ազգը. նա մեզ էլ կը սպանի՝ հասցնելով ազգը հ ա յ կ ա կ ա ն ջ հ ո ւ դ ո ւ թ ե ա ն...

Եւ այն, ինչ որ մինչև այժմ չաջողուեց մեր թշնամուն իր միջոցներով, ժամանակակից հայ սերունդը կարծէք ուզում է աջողցնել իր անմիտ „քաղաքականութեամբ“, հայկական այս սպանիչ և յուսահատ թափառականութեամբ, այն ոգով, որ հային տանում է դէպի ամէն կողմ և երբէք դէպի Հայաստան... 500 տարւայ ստրկութիւնից յետոյ՝ հէլլէնը՝ հակառակ ամէն զոհերին՝ իր կուի դրօշը անկեց աւերակածածկ հայրենիքի կրծքում, այն հողում, որից մինչև այժմ էլ չէ էքացել նահատակների արեան բուրմունքը։ Արիւնը նրան չփախցրեց, այլ աւելի սերտ կապեց։ Մի թէ՞ մենք պիտի փախչենք։ Մեր ստրուկ, մեզանից աւելի հալածական, մեզանից աւելի տգէտ նախնիքը՝ տանջանքների բովից անցնելով՝ մեզ թողին մի մեծ ժառանգութիւն—հ ա յ ր ե ն ի ք։ Ի՞նչ, մի թէ՞ մենք պէտք է մեր ապագայ սերունդին հ ա յ ր ե ն ի ք ի փոխարէն թողնենք լոկ հ ա յ կ ա կ ա ն կ օ լ օ ն ի ա ն ե ր, ցիրուցան ովկիանի այս և այն կողմը, չշաղկապուած ոչ մի զգացմունքով, ժողովրդական ոչ մի գաղափարով...

Մեր հայրենիք — դեռ 40 տարի առաջ ասաց անմոռանալի հայրենասէրը —

Որ որդիքը արդ կանչում է
Հանել իր վրէժ, քէն ու ոխ:

Եթէ 40 տարի առաջ կային „որդիք", որոնք խուլ էին և անընդունակ ըմբռնելու այդ կոչը, այժմ, 20 տարուայ անսովոր դէպքերից և անլուր զոհերից յետոյ՝ չպիտի լինեն այդպիսիները: Այդ „վրէժ, քէն ու ոխը" կանչում է հային դէպի Մայր-Երկիր և ոչ դէպի Եւրոպա կամ Ամերիկա: Օտարները մեզ արդէն ճանաչեցին: Այժմ երկիրն է մեր ապրելու տեղը, գործելու ասպարէզը: Այնտեղից թող հնչի մեր բողոքը, այնտեղից լսի մեր սպառնալիքն ու աղերսանքը: Եւ այնտեղ, անխրախոյս, յուսահատ, տանջուող ժողովրդի մէջ թող նորից բուն դնեն այն բոլոր ուժերը, որոնք այժմ՝ յաճախ ապարդիւն կերպով՝ սպառւում են օտար երկրներում, հայրենիքից շատ հեռու, օտար աշխարհներում:

Դէպի՛ երկիր—ահա այսօրւայ մեր նշանաբանը:

Եւ թող սրանից յետոյ մեր պրօպագանդի ամբողջ գծի վրայ, պանդուխտների շրջանում թէ գաղթականների մէջ, Պոլսի խաներում թէ կովկասեան թէյարաններում, ամերիկական հայոց ժողովարաններում թէ Բալկանի ճորերում, Ատրպատականից մինչև Նեղոս ու Նեղոսից մինչև Դանուբ՝ ամէն տեղ և ամէն ժամանակ բարձրաձայն հնչի հայութեան ականջին նոյն յամառ հրաւէրը, նոյն ազդու կոչը՝

Դէպի՛ երկիր, դէպի՛ երկիր:

ԱԼԵՔՍԻՔ ՄԱԼՕՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Էն արծիւն էր թռաւ, գնաց
Մեր վրայով, մեր միջով.
Ա՜խ, էն մեր սիրտ, մեր ազիզն էր՝
Գնաց սարով, սար-դարդով:

Էնոր դարդը, ա՜խ, մեր դարդն էր՝
— Ու մեր սրտից էն գնաց.
Էնոր դարդը խեղճի դարդն էր,
— Խեղճի սրտից էն գնաց:

Ու գնացի՛ր, ո՞ւր գնացիր,
Մենակ, մենակ գնացիր...

Հեռո՛ւ տեղեր, արնոտ տեղե՛ր,
Ոխը սրտիդ, հոգի՛ ջա՛ն.
Ընկար մենակ ու անընկեր
Դուման դաշտեր, Աւօ ջա՛ն:

Ընկերներդ, ա՜խ, քեզ մոռցան,
Կեանքի ճամբով գնացին,
Քու սուրբ սրտի ոխը մոռցան,
Գերեզմանդ կորուցին...

ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԷՆ

Ապրիլ 11

Օդերը տակաւ առ տակաւ կը մեղմանան: Զմրան սպառնալիքներն կ'անհետանան: Գեղազարդ, հիասքանչ է գարունը. բնութիւնը կը ծլի, կը փթթի... Օ՜, Հայաստանի գարունն է այդ, որ երբեմն երգերու ձայներով ու բերկրալից աղաղակներով կ'ողջունէր հայէն ու հայուհիէն, շինականի աղջիկէն սկսեալ մինչև արևի կարօտ ծերուկը... Սակայն խաղաղութեան օրերը անդարձ կերպով սահեցան: Տխրութիւնն և հոգեկան վիշտը, աղիողորմ լացն ու կսկիծը, բռնութիւնն ու հալածանքը — ահա ինչ կը բնորոշէ այսօր մեր սոսկալի դրութիւնը: Եւ ի լրումն չարեաց՝ սովի ուրուականն է որ երևան կուգայ: Կառավարութեան հրամանաւ երթևեկը իսպառ խզուած է, առևտուր և արհեստ դադրած են, արտերը կը խոպանան, վասնզի երկրագործը անկարող է ցանել, և տնտեսական տագնապը կը տիրէ:

Շրջակայ գաւառներէն հարիւրաւոր ընտանիքներ հոս լեցուած են ի խնդիր սոսկ մի պատառ հացի... Որո՞ւ դիմել...

Դերջանի, Կարնոյ, Բասենի և այլ գաւառների մէջ դէպ այլագաւանութիւն հոսանք մը կայ: Օտար կրօնականներ պատեհ առիթ գտեր են պղտոր ջրի մէջ ձուկ որսալ՝ իրենց փարախներն լեցնելու հաւատացեալներով: Դրամական հատուցումներ խոստանալով՝ Օրթոդոքս և Վատիկանի կղերները որսը իրարու ձեռքէ կը խլեն:

Նիւթականի և հացի պակասը համաճարակ հիւանդութիւններ ևս առաջ կը բերէ: Քաղաքէս 4 ժամ հեռու դէպի արևելք Բ թ ա ռ ի ճ գիւղին մէջ մէկ շաբթուան մէջ 30-40 հոգի զոհ կերթան թ ի ֆ ո ըսուող հիւանդութեան: Գիւղացիք խնդրամատոյց եղան ազգային առաջնորդարան և կառավարութեան: Ընդ ձեռներէցութեամբ միթէսարիֆի՝ դրամի և ցորենի հանգանակութիւն մը բացուեցաւ և բժիշկ մը ու քահանայ մ'ալ խրկուեցան մեռելներն թաղելու ու հիւանդները հոգալու համար: Երբ հանգանակուած ցորեն, նպաստ ևն գիւղը կը տարուին, տեղւոյն թիւրքերն ալ յանկարծ կանօթնան, ոտքի կ'ելլեն և հաւասարապէս կ'օգտուին այդ նպաստներէն:

Երկու շաբաթ առաջ Ծ ա թ գիւղի մէջ, քաղաքիս հարաւարևելեան կողմէն $2^1/_2$ ժամ հեռի, պահակախումբ մը (գրսէրդարի) հանգչելու կերթայ, կամ լաւ է ըսել, համադամ կերակուրներ, խորտիկներ լափելու: Գիւղը խառն է թիւրք և հայ: Զինուորաց կէսն թիւրքաց մօտ կը գտնուին, իսկ կէսը հայոց: Հայոց բաժնին մէջէն զինուոր մը պատճառաբանութիւնով մը կերթայ իր տասնապետին գանգտիլ ըսելով՝ թէ գեաւուրներն ինձի լաւ տեղ չտուին: Տասնապետն անմիջապէս կը հասնի և գիւղին մէջ առաջին հանդիպած հայուն սուրի հարուածներով ծանր վէրքեր կուտայ: Վիրաւորն քաղաք բերին կառավարութեան բողոքելով, բայց թիւրքերը կը պատասխանեն թէ՝ „զարար եօգ, զարար եօգ":

Ուրիշ դէպք մ'ալ փետրվար 18-ին Ե ր կ ա ն գիւղին մէջ տեղի կ'ունենայ: Երկանը կը գտնուի վերոյիշեալ Ծ ա թ գիւղին գրեթէ կից և կը պարունակէ 70-80

տուն Հայ ու 7-8 տուն քիւրդ և Թիւրք։ Մօտակայ Կէլնձիք անուն գիւղէն 5-6 ձիաւոր կերթան եղեր Երկան հարս մը բերելու։ Հարսնառուի պահուն քիւրդերն անոնցմէ պախշիշ կ'ուզեն, որուն կ'ըսի „շիշլիք" (կէս օսմանեան ոսկի դրամ), և ի փոխարէն անոնց ձիերուն մէկին համեմը կը պահեն։ Հայերը կ'ընդդիմանան՝ այդ սովորութիւնը վերացուած յայտարարելով և իրենց ձիուն համեմը պահանջելով։ Խօսքին կը յաջորդէ բանակռիւ և ապա իսկական կռիւ։ Թիւրքերն զէնքի կը դիմեն, բարձրաձայն յայտարարելով՝ թէ արդէն „ամրան ընդհանուր հայութիւնը պիտի կոտորուի կրկին. թող ըլլայ թէ մենք քիչ մը առաջ սկսած ըլլանք"... Հայերը պատեհ միջոցի մը մէջ իրենց հարսը զարտուղի ճանբաներով կը փախցունեն։ Զինեալ թիւրքերն կը հետևին, բայց դրացիներու և ծանօթներու միջամտութեամբ աղէտին առաջը կ'առնուի։ Սակայն խիստ ուշադրութեան արժանի կէտը հոն է, թէ հայերուն նորէն կոտորելու այս ի՞նչ լուրեր է, որ թիւրքերը բերանին են առեր...

23 մայիս

Կառավարութեան ամբողջ ուշադրութիւնը զբաղած է հայերով՝ զայնս ջնջելու, քայքայելու նորանոր ծրագիրներ յղանալով։ Մի որոշ մասն ջնջեց արդէն և այժմ նոյն նպատակի համար ուրիշ միջոցների ալ կը դիմէ։ Այս օրերը ընդհանուր ուղղակի տրոց վրայ 6%՝ տուրք մը ալ կ'աւելնայ՝ զինուորական կազմակերպութեան պիտոյից համար գործածելու։ Ո՞վ պիտի վճարէ.— Իհարկէ հայը, անխտիր, առանց պայմանի։ Որո՞ւն հոգը թէ հայը անսաղութենէ զոհեր կուտայ։ Խեղճ ժողովուրդը՝ մոռցած ամէն ինչ՝ հաց, չորաբեկ հաց մը կը խնդրէ և չգտներ, և սակայն այս անգամ իր ամբողջ տուրքն ալ վճարելու է յաւելուածով մէկտեղ, որպէսզի իր դահիճը զինք խողխողելու, յոշոտելու համար նոր սիստէմի զէնքեր գնէ... Բայց այդ ալ բաւական չէ։ Քիւրդերն ալ այժմ մի երկրորդ կառավարութիւն ստեղծած են հայերի վրայ։ Երեք-չորս շաբաթ առաջ քիւրդերէն լուր խրկուած է բոլոր գիւղերուն, որ տարեկան տուրք մը (սիւռէ) վճարեն քիւրդ իշխանութեան, եթէ ոչ կաւարեն ամբողջը...

Ահա մի դէպք, որ իր տեսակին մէջ եզական կը նկատուի անշուշտ։ Քանի մը շաբաթ առաջ երկու տարբեր ընտանիքէ կիներ, որոնց միոյն այրը և միւսին որդին Ամերիկա կը գտնուին բաւական ժամանակէ իվեր և որոնց մէյ մէկ պզտիկ անչափահաս զաւակներն գրեթէ ապրուստի միջոցներից զուրկ էին, ստիպուած կը ըլլան Ամերիկա գնալ։ Ուստի Թիւրքիոյ նաւահանգիստ մ'եղող քաղաքը գնալու համար անցագիր կ'առնեն, որպէսզի հոն որոշեն ընելիքնին։ Եւ ահա, հազիւ նրանք մի օրուան ճանապարհ կը հեռանան քաղաքէս, ձերբակալութիւններ է՝ որ կըսկսին հոս.—այդ կիներու վկայագրեր (շահատէթնամէ) ստորագրող մուխթար, հարկահաւաքիչ, թաղապետութեան անդամ և անցագրի գործոյն աշխատողներ կը լեցուին բանտ։ Կը հարցաքննուին և կ'որոշուի որ ատոնք, իբր կառավարութիւնը կեղծողներ, պատժուին, և օրինաց ամէնէն ծանր տրամադրութիւնք գործադրուին, վասնզի արդիլած է հայերուն Ամերիկա երթալու անցագիր տալ։ Եւ այդպէս յիշեալ անձնաւորութիւնները դեռ կը մնան բանտի անկիւնը։ Իրենց հարցաքննութեանց թղթերը (էվրագ) նահանգային կառավարութեան ղրկուած է։ Իսկ Ամերիկա գացող կիները իրենց ճամբան շարունակելով մինչև Տրապիզոն հասան. հոն բանտարկուելէ վերջ, ետ դարձուելով, կրկին բերին Երզնկայ։ Տեսնենք, թէ անոնց ի՞նչ կ'ըսեն։

Այսօր մի նորութիւն ևս։ Քաղաքէս մէկ քառորդ ժամ հեռի դէպի արևելք Բ զ ու ն գիւղի բնակիչները կառավարչատուն լեցուած են բողոքելու չարագործ թիւրքի մը համար, որ տակաւին 2-3 ամիս չքներ բանտից դուրս գալն։ Յիշեալը 3-4 ընկերներով կ'երթան Բղուան և 50 լիրայ տուրք կը պահանջեն գիւղացիներէն և այս առթիւ գիւղին աչքի զարնող անձնաւորութիւն մը՝ն ալ պատանդ կը վերցնեն, որին սակայն շուտով ազատ կը թողուն՝ կրկնելով իրեն, որ եթէ 50 լիրան իրենց չվճարուի, գիւղը պիտի աւերեն։ Պատահածն անմիջապէս կ'իմացնեն կառավարութեան, որ մի ոստիկանապետ (կոմիսէր) և երկուք ալ ժանտարմ կը ղրկէ գիւղը քննելու։ Աւազակներն տակաւին գիւղին շուրջը կը գտնուէին։ Ոստիկանք ձերբակալել կ'ուզեն և երբ իրենց կը պատասխանուի հրացանի մէկ-երկու հարուածներով, հազիւ հազ շունչերը բերանին՝ քաղաք կը վազեն։ Այժմ ալ պահակ զինուորութիւն մը ղրկել կ'ուզէ կառավարութիւնը, իհարկէ աւազակաց չկրցածը անոնք ընելու և կամ անոնց սկսածը վերջացնելու համար։ Այս դրութեամբ կը յուսանք թէ բուն քաղքէն ալ „սիւռէի" տուրք պիտի վճարուի քիչ օրէն։ Այս անտանելի կացութիւնը և դէպքերու յաջորդութիւնք արդէն պարբերական դարձած են. ոչ մի ազգային իշխանութիւն, ոչ պատրիարք, ոչ առաջնորդարան, ոչինչ նշանակութիւն չունին այս վայրերի կառավարութեան համար։ Մեր միակ պաշտպանը պիտի ըլլայ մեր դիմադրութեան ուժը՝ յեղափոխութեան մէջ մարմնացած։ Ուստի ազգային և եղբայրական սէրը կոչ կընէ մեզի առհասարակ ամենայն խնամով և վերապահութեամբ փարիլ այդ վերջին փրկարար իտէալին, որ պիտի ըլլայ մեր ճակատագիրը բարելաւողը, մեր փրկիչը ու մոռացեալ քաօսէն մեզ ազատող միակ գործօնը։ Լաւ ճանչնանք մեզի և մեր թշնամին, ու խնդիրը ինքնին պիտի դիւրանայ...

Ահա ինչու մեր կեանքի ամենացաւալի կէտերէն մէկն ալ պիտի համարուի տեղական երիտասարդութեան մասի մը անտարբերութիւնը, ոմանց պահպանողական և մաս մ'ալ դիմակաւոր յեղափոխականների լկտի ու անամօթ վարմունքը։ Ատոնց առայժմ զգաստութիւն միայն կը մաղթենք։ Թող չմոռնան՝ թէ պատմական պատասխանատուութեան օր մ'ալ կայ իրենց առջև։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 2 մայիս

Դժուար թէ նեվայի ափերում գտնուի մի հատ գրող, որ չճանաչէր այն հիմնարկութիւնը, որի ճակատին գրուած է „Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւն" (Գլաւնօէ ուպրաւլենիէ պօ դելամ պէչաթի)։ Ի՞նչ է դա։ — Դա մտածող Ռուսաստանի ոստիկանութիւնն է, ոստիկանութիւն մտքի, գաղափարի, ոստիկանութիւն գրականութեան և մամուլի։

Կարող էիք երևակայել, որ բիւրօկրատիական օրէնքներով՝ գրականութիւն և մամուլը այժմեան Ռուսաստանում չէ համարւում լուսաւորութեան գործօն. ապա թէ ոչ՝ ինչպէս կը բացատրէք այն փաստը, որ „Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը“, որի ձեռքնումն է ամբողջ մամուլի և գրականութեան ղեկը, չի ենթարկւում ժողովրդական լուսաւորութեան մինստրութեան, որը այսպէս թէ այնպէս կոչւած է հրսկելու պետական լուսաւորութեան գործին, այլ նա ենթարկւում է ներքին գործերի մինիստրութեան, որից կախումն ունեն այնպիսի մարմիններ, ինչպէս են, օրինակ, ոստիկանութեան և ժանդարմների վարչութիւնը։ Բնականաբար ներքին գործերի մինիստրութեան ձեռքում՝ „մտքի կարգապահութեան“ վերաբերմամբ Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը նոյն դերն է կատարում, ինչ որ „ընդհանուր կարգապահութեան“ վերաբերմամբ՝ ոստիկանը և ժանդարմը։ Եւ այս պատճառով է ահա, որ ես Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը անուանեցի մտածող Ռուսաստանի ոստիկանութիւն...

Յետագայ փաստերը այդ կապացուցանեն։

Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը, ինչպէս այդ երևում է նրա անունից, կետրօն է՝ հաստատւած մայրաքաղաքում։ Նա մի շատ բարդ մարմին է, նախագահով, փոխ-նախագահով, անդամներով, քարտուղարներով և ծառայողների մի ամբողջ լեգէօնով։ Ունի իր ստորադրեալ ճիւղաւորութիւնները գաւառներում, որոնք կոչւում են „Յենզուրական կոմիտէներ“՝ բաղկացած մի նախագահից, մի քանի ցենզօրներից, որոնք կոչւում են կոմիտէի անդամներ, քարտուղարից, մի քանի հասարակ ծառայողներից, ուրեմն էլի ամբողջ մի մարմին, որի պահպանութիւնը ամէն տարի պետական գանձարանից պահանջում է հրէշաւոր ծախք։ „Յենզուրական կոմիտէները“ գտնւում են նահանգական կարևոր կետրոններում. երկրորդական քաղաքներում պահւում է մի ցենզօր՝ սովորաբար տեղական իշխանութեան մի պաշտօնեայ, որի պարտքն է քննել այն լրագիրները, որոնք լոյս են տեսնում այդ քաղաքում, և որը, իհարկէ, պարբերաբար հաշիւ է տալիս իրանից բարձր ատեանին՝ իր շրջանի ցենզուրական կոմիտէին։ Ամբողջ Կովկասի համար գոյութիւն ունի մի միայն մի հատ „ցենզուրական կոմիտէ“, որ գտնւում է Թիֆլիսում, բաղկացած մի նախագահից և մի քանի անդամներից, — մի ցենզօր ռուսերէն հրատարակութիւնների համար, երկուսը հայերէնի և մէկը վրացերէն հրատարակութիւնների համար։ Դրանք պիտի նայեն և թիւրքերէն հրատարակութիւնները, եթէ լինեն։ Բարտուղար և միւս երկրորդական ծառայողներ՝ իհարկէ ըստ կարգին։ Կովկասեան միւս քաղաքներում, նոյնիսկ նահանգական, կոմիտէներ չկան, այլ կան, ինչպէս օրինակ Բագու, մի ցենզօր, որ նահանգական վարչութեան պաշտօնեայ է, շատ անգամ նոյնիսկ նահանգապետի օգնական, որի վրայ պարտք է դրւած նայելու այնտեղ լոյս տեսնող լրագիրները։ Եթէ կովկասեան ուրիշ քաղաքներում կան մարդիկ, որոնք ուզում են գիրք տպագրել, պէտք է ուղարկեն Թիֆլիսի կոմիտէին. տեղական ցենզօրը իրաւունք չունի գրքեր նայելու։ — Ահա այդ է կազմակերպութիւնը այն ահագին մեքենայի, որ կոչւում է ցենզուրական հիմնարկութիւն և որի ձեռքերում սղմւած է Ռուսաստանում գրականութիւնը և մամուլը։

Եւ ցոյց տալու համար, որ դա մի կամայական մարմին չէ, անսանձ և անդիմադրելի, կառավարութիւնը հրատարակել է մի յատուկ օրինագիրք, որի անունն է „Յենզուրական կանոնադրութիւն“ (Յենզուրնիյ ուստավ) և որով իբրև թէ պէտք է ղեկավարւեն ցենզօրները։ Այդ կանոնադրութիւնը իհարկէ անվերջ և խեղդող ձևականութիւնների մի ահագին ժողովածու է, բայց ամէն մի գրող, որ ապրում է Ռուսաստանում, այն աստիճան ներողամիտ է դառնում գրելու և տպագրելու ազատութեան հարցում, որ հազար երանի կը տար թէ իրեն և թէ ժողովրդին, եթէ կարողանար օգտւել նոյնիսկ այն սահմանափակ իրաւունքից, որ տալիս է „Յենզուրական կանոնադրութիւնը“։ Այստեղ էլ, ինչպէս ամէն մի ուրիշ ճիւղում, ահագին, ջախջախիչ դեր է կատարում չինովնիկ-ցենզօրի քմահաճոյքը՝ միացած այն անթիւ, անհամար գաղտնի հրահանգների հետ, որ ամէն օր փոստը Պետերբուրգից տարածում է դէպի Ռուսաստանի բոլոր ծայրերը։ Ցենզօրի քմահաճոյք և գաղտնի հրահանգ — ահա, եթէ կամենում էք, ժամանակակից „Յենզուրական կանոնադրութիւնը“ Ռուսաստանում, որի առաջ իրական ոչինչ արժէք չունի պաշտօնական օրինագիրքը, իսկական „կանոնադրութիւնը“։

Օրինակներ։

„Յենզուրական կանոնադրութեան“ նայելով՝ գրքընիչը մի գլխաւոր պարտք միայն ունի — թոյլ չտալ այն գրւածքները, որոնք կարող են ցնցել պետական կազմակերպութեան կամ հասարակական բարոյականութեան հիմունքները, — այլ խօսքով այն գրւածքները, որոնք դէմ են միապետութեան և կրօնի հիմնական սկզբունքներին։ Պէտք է կարծել ուրեմն, որ նոյն այդ կանոնով ամէն բան, որ չէ շոշափում այդ երկու հիմնական խնդիրները — թոյլատրելի է։ Բոլորովին ոչ։ Ոչ ոք Ռուսաստանում լեգալ գրականութեան մէջ չի էլ փորձում քննադատել միապետին կամ միապետութիւնը և ցնցել կրօնական բարոյականութեան հիմքերը, քաջ գիտենալով, որ ոչ միայն այդպիսի ձեռնարկութիւն, այլ և նոյնիսկ մտադրութիւն՝ մի հետևանք միայն կունենայ — բանտ կամ աքսոր։ Դա ոչ-լեգալ գրականութեան գործն է։ Սակայն ցենզուրական արհեստը,—եթէ միայն արհեստ անունը կարելի է տալ միտք սպանող այդ հիմնարկութեան — այն աստիճան առաջ է գնացել, որ հնարաւոր է համարում արգելել, խափանել, ջնջել և ոչնչացնել այն բոլորը, ինչ որ նոր է, թարմ, ինչ որ կարող է միտք շարժել, հետաքրքրութիւն յարուցանել՝ ինչ ճիւղի և պատկանէր դա։

Առանձնակի պայմանների մէջ են, իհարկէ, արտասահմանեան ռուս հրատարակութիւնները։ Շատ բան կայ այդ հրատարակութիւնների շարքում, որոնք, իհարկէ, այժմեան ցենզուրական պայմաններում Ռուսաստան մտնել չեն կարող, բայց կայ և շատ այնպիսի բաներ, թէև անմեղ, որոնք արգելւած են լոկ այն պատճառով, որ արտասահման են տպագրւած։ Ինչ վերաբերում է արտասահման քշւած ռուս գրողներին և գործողներին, նրանց անուններն անգամ չէ կարելի տալ, ուր մնաց նրանց գրւածքները ստանալ։ Երկար ժամանակ արգելւած էր յիշատակել Գերցենի անունը. այժմ թէև անունը կարելի է տալ, բայց նրա աշխատութիւնների

լեկատար ժողովածուն, տպագրած Ծրնէվում, խիստ կերպով արգելած է։ Նոյնը պէտք է ասել և Լավրովի մասին, որ վախճանուեց Պարիզում, ինչպէս նաև Բակունինի կամ Կրապոտկինի վերաբերմամբ։ Արտասահմանում պէտք է որոնել ոչ միայն՝ մեռած թէ կենդանի, նշանաւոր թէ աննշան՝ ռուս յեղափոխական գրողների գրուածքները, այլ շատ երկեր այնպիսի գրողների, որոնք կազմում են ռուսաց գրականութեան փառքը և որոնց կենսագրութիւնը աւանդւում է կառավարչական դպրոցներում։ Այդպէս օրինակ, Տուրգենեվ, Նեկրասով, Տոլստոյ գրուածքներ ունեն, որոնք ազատ են միմիայն սահմանի այն կողմը։ Երևակայեցէք, որ մինչև իսկ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի գրչի տակից դուրս եկած բաներ կան, որոնք արգելած են։ Իսկ այդ հեղինակների ծննդեան վայրից արդէն դար է անցել և նրանց արձաններով Ռուսաստանը պարծենում է...

Սակայն ընդունենք մի րոպէ, որ ռուսաստանցի գրողների վերաբերմամբ գրաքննութիւնը շատ խիստ է այն անհիմն „քաղաքական“ պատճառով, որ նրանք կամ „կասկածելի“ են եղել կամ իրենց գրուածքների մէջ՝ թէև անուղղակի՝ ռուսաց կառավարութիւնն են ինկատի ունեցել։ Բայց ի՞նչ պիտի ասել և ինչո՞վ բացատրել օտար, եւրոպական գրականութեան վերաբերմամբ ցոյց տուած խստութիւնը։ Տարաբաղդաբար այդտեղ էլ նկատւում է նոյն երևոյթը, — ինչ որ նոր է և թարմ, ինչ որ կարող է միտք շարժել, մտածել տալ, ջնջւում, արգելւում, հալածւում է։ Եւ այդ իսկ պատճառով գրաքննութիւնը թոյլ չէ տալիս թարգմանել եւրոպական գրականութեան շատ երկերը, թէև ամբողջ Ռուսաստանին քաջ յայտնի է, որ եւրոպական գրականութիւնն է ռուսաց գրականութեան գլխաւոր, եթէ չասենք միակ՝ աղբիւրը։ Դարվինի մի քանի աշխատութիւնները երկար ժամանակ արգելւած էին Ռուսաստանում։ Ում մտ գտնէին Կարլ Մարքսի „Կապիտալը“, նրա տեղը բանտն էր։ Նոյն իսկ պրոֆէսոր Շէֆլէի խղճուկ բրոշիւրը սոցիալիզմի մասին՝ արգելւած է։ Լուի Բլանի, Բլանկիի, Պրուդոնի, Բաբեոֆի, Սէն Սիմոնի, Լասսալի, Էնգէլսի մասին կարելի էր խօսել միայն շշուկով, խիստ զգուշութեամբ։ Միշլէ և Տէն յաճախ վռնդւել են գրադարաններից։ Բէնանի մի քանի աշխատութիւնները Ռուսաստանում միայն անունով են յայտնի։ Սպէնսէր արգելւած շատ կտորներ ունի։ Եթէ մենք ուզենանք ամբողջութեամբ կարդալ Նոյնիսկ Վոլտէր, Վիկտոր Հիւգո կամ Զոլա, պէտք է սահմանագլուխը անց կենանք։ Կան ցենզորներ, որոնք կարելի են համարում կտորներ ջնջել Նոյնիսկ Շէքսպիրից, Բայրոնից, Շիլլէրից կամ մինչև իսկ Կանտից կամ Հեգելից։ Միամտութիւն կը լինի կարծել, որ ռուս ցենզորների մէջ չկան այնպիսիները, որոնք հանգիստ խղճով կարմիր թանաքով գծեր կը քաշեն Դանտէի ամենագեղեցիկ էջերի վրայ իբրև վնասակար ու վտանգաւոր և մկրատի կենթարկեն այնպիսի բանաստեղծական կտորներ, որոնց վրայ հանգստանում է եւրոպացի ընթերցողի միտքն ու հոգին։ Վերջապէս եւրոպական նորագոյն պուբլիցիստների գրուածքների մի տասներորդ մասն անգամ չի անցում ռուսաց սահմանը։ Նոյն վիճակին են ենթարկւում անթիւ, անհամար լրագիրներ, ամսագիրներ, բրոշիւրներ և գրքեր, թէև այս բոլորը, սկսած բանաստեղծութիւնից մինչև հրապարակախօսութիւնը և գիտութիւնից մինչև պատմութիւնն ու վիպասանութիւնը, ոչինչ առնչութիւն չունի ռուսաց „միապետութեան“ ներքին ապահովութեան հետ։

Մի այլ օրինակ։

Նոյն „Ցենզուրական կանոնագրութեամբ“ իրաւունք է տրւում քննադատելու և մերկացնելու օտար պետութիւնների գործերը ու քաղաքականութիւնը, և ցենզորը օրէնքով ոչ մի իրաւունք չունի օտար երկրի մասին գրած մի պախարակման կամ գովասանքի տակ՝ յետին միտք տեսնել և ենթադրել, որ դա անուղղակի քննադատութիւն է ռուսաց կարգերի դէմ։ Ես հարկ եմ համարում կանգ առնել այդ կէտի վրայ և այն պատճառով, որ դա կապ ունի և եւրոպական գրրուածքների հետ, որոնց մասին քիչ վերև խօսեցի և որոնց արգելելով՝ ռուս ցենզորը իրեն արդարացնում է նրանով, թէ այդ գրքերը, ճշմարիտ է, ուղղակի Ռուսաստանին չեն վերաբերում, բայց անուղղակի կերպով նրա պակասութիւններն են յիշեցնում։ Օրէնքը հրամայում է յետին մտքեր չտեսնել։ Սակայն չնայած օրէնքի այդ ուղղակի կարգադրութեան, գրաքննութիւնը թոյլ չէ տալիս ոչ օտար գրուածքների թարգմանութիւն և ոչ օտար երկերի քննադատութիւն կամ գովասանք։ Պատմագրողը ուզում է խօսել ֆրանսիական հանրապետութեան կարգերի մասին, նրան արգելում են. „Դուք ուզում էք ասել, որ հանրապետութիւնը աւելի լաւ է քան միապետութիւնը“։ Պուբլիցիստը յարձակւում է տաճիկ սուլթանի կամ չինացի կայսրի վրայ. նրան ասում են. „Իրաւունք չունիք. նրանք էլ միապետներ են. քննադատել նրանց կը նշանակէ անուղղակի կերպով քննադատել մեր միապետին“։ Տնտեսագէտը ուզում է վերլուծել եւրոպական տնտեսական կարգերը կամ կանգ առնել ոևէ բանւորական շարժման վրայ՝ „Ներեցէք — նկատում է ցենզորը՝ կարմիր գիծը քաշելով — դա վատ մտքեր կը ներշնչէ մեր երիտասարդութեան“։ Լրագիրը գովում է անգլիացուն — արգելում են — „Անգլիան Ռուսաստանի թշնամին է“. յարձակումն է գործում ֆրանսիական հանրապետութեան նախագահի այս կամ այն ամօթաբեր արարքի վրայ — դիցուք այն, որ նա շքանշաններ է ստանում Մեծ-Մարդասպանից — կանգնեցնում են. „Ֆրանսիան մեր բարեկամն է“։

Մի օրինակ ևս։

Դուք ուզում էք մի լրագիր կամ ամսագիր հրատարակել։ „Ցենզուրական կանոնագրութիւնը“ ըստ երևոյթին մեծ դժուարութիւն չէ յարուցանում դրա դէմ։ Պէտք է խնդիրք գրէք, — մարկան փակցրած — տաք ցենզուրական կոմիտէին, որը և ուղարկում է Պետերբուրգ՝ Տպագրական գործերի գլխաւոր վարչութեան, նա էլ իր կողմից ներկայացնում է ներքին գործերի մինիստրութեան, և դուք ստանում էք պատասխանը — այսինքն մերժումն. թոյլտուութիւն՝ շատ քիչ դէպքում։ Այդ պատասխանը տևում է 5-6 ամիս, երբեմն տարի և էլի աւելի։ Ինչո՞ւ։ Հէնց այդտեղ է գաղտնիքը և պատմութիւնը...

Հետաքրքրական է մի փոքր աւելի կանգ առնել այդ „պատմութեան“ վրայ։ Դիցուք Պետերբուրգում խնդիրք են ստանում Թիֆլիսից ոևէ պարոնից, որը թոյլտուութիւն է ուզում լրագիր հրատարակելու։ Նախ այդ խնդիրքի մէջ նշանակւած պիտի լինի, թէ արդեօք լրագիրը միայն գրական պիտի լինի թէ գրական և քաղա-

քական, ամենօրեայ թէ երկօրեայ, մանրամասն բոլոր բաժինները, գինը, նոյնիսկ մեծութիւնը, հետը կցած „դոկումենտների“ մի ամբողջ կապոց խմբագրի և հրատարակչի անձի մասին — նրա ծնունդը, կրօնը, ազգութիւնը, ուսման աստիճանը, զբաղմունքը, դիրքը... Ստանալով այսպիսի մի խնդիր, Պետերբուրգից երեք հարց են տալիս կովկասեան իշխանութեան. առաջինը՝ Թիֆլիսի ցենզուրական կոմիտէին, երկրորդը՝ ժանդարմների վարչութեան և երրորդը՝ ոստիկանութեան։ Ցենզուրական կոմիտէն կարծիք պիտի յայտնէ՝ թէ արդեօք ինքը այդպիսի մի լրագիր հարկաւոր է գտնում և արդեօք առաջարկուած խմբագրի անձը յարմա՞ր է։ Ժանդարմների վարչութիւնը պիտի տեղեկացնէ, թէ արդեօք խմբագրի թեկնածուն կասկածից դուրս է թէ՞ կասկածի տակ։ Եւ վերջապէս ոստիկանութիւնն իր կողմից պիտի հաղորդէ, թէ արդեօք ոևէ բանում խառնուած չէ տեսել առաջարկուած թեկնածուին։ Եւ ահա այս տեղեկութիւնները հաւաքելու համար սկսում են քրքրել ժանդարմական արխիւները, գաղտնի ոստիկանութեան մատեանները և նոյնիսկ ստորին ոստիկանների յիշատետրերը։ Եւ եթէ առաջարկուած խմբագիրը երբևիցէ ընդհարումն է ունեցել ոստիկանութեան հետ, նոյնիսկ քաղաքական կամ հասարակական բնաւորութիւն կրող հարցերից դուրս, կամ իր կեանքում մի այնպիսի յօդուած է գրել կամ մի այնպիսի օրգանի է աշխատակցել, որ հաճելի չէ ոևէ ցենզորի —պրծաւ... մերժումը պատրաստ է։

Ահա այդ է պատճառը որ՝ շատ հազւագիւտ բացառութեամբ՝ Ռուսաստանում խմբագրի պաշտօնը յանձնւում է միայն անմեղ, անգոյն, բոլորովին անընդունակ, և իհարկէ ոևէ „կասկածներից“ կատարելապէս ազատ անձանց։ Դա արդէն անցել է սովորական երևոյթների շարքը և այդ պարզ պատճառով խմբագիրը այլևս գրող, խմբագրող չէ, այլ մի ձևական մարդ, պաշտօնապէս պատասխանատու անձն, որ շատ անգամ ստիպւած է դատարան գնալ և բանտ նստել այնպիսի գրւածքների համար, որ ոչ գրել է, ոչ կարդացել տպելուց առաջ և ոչ էլ համակրում է։ Պետերբուրգում՝ այդպիսի խմբագիրների համար նոյնիսկ յատուկ անուն կայ —„բանտային խմբագիր“. այսինքն մի խմբագիր, որ պատիժ նշանակւած դէպքում պիտի պատիժը կրի՝ բանտ նստի։

Սակայն, դառնալով մեր պատմութեան թելին, ընդունենք, որ վերև յիշած բոլոր երեք հիմնարկութիւններն էլ խմբագրի անձի մասին լաւ կարծիք յայտնեն — օ՜հ, դրա համար պէտք է շատ աշխատել, շատ դռներ բաղխել, շատ „մարդկանց տեսնել“,—բայց էլի մի բարձր տեսան կայ։ Դա կովկասեան կառավարչապետն է։ Նա էլ իր կողմից պէտք է յայտնէ, որ ոչինչ չունի նոր լրագրի թոյլտւութեան դէմ, որովհետև կարող է պատահել, որ բոլոր երեք հիմնարկութիւններն էլ նպաստաւոր կարծիք տան, բայց և այնպէս կառավարչապետը ոևէ պատճառով գտնէ, որ առհասարակ նոր լրագիր աւելորդ է։ Այդպիսի բան կարող է պատահել և պատահում է։ Բայց այս էլ վերջինը չէ։ Նոյնպիսի բան կարող է կրկնւել և Պետերբուրգ։ Դիցուք կառավարչապետն էլ կարծիք յայտնեց, որ նոր լրագիր կարելի է թոյլ տալ. այնուամենայնիւ Պետերբուրգ—ներքին գործերի մինիստրի դիւանում կամ Տպագրական գործերի գլխաւոր վարչութեան մէջ — ոևէ չինովնիկի „անհասանելի բարձր“ տեսակէտների շնորհիւ—կարող են գտնել, որ առհասարակ ցանկալի չէ նոր օրգանի թոյլտւութիւնը, և ուրեմն դարձեալ... մերժումը պատրաստ է՝ իր դաժան դէմքով։

Տեսնում էք ուրեմն, որ այս „աներևոյթ“ արգելքների առաջ „Ցենզուրական կանոնադրութիւնը“ լոկ մի ձև է, զուրկ ոևէ արժէքից։ Այդ կանոնադրութիւնը չէ, որ պայմանաւորում է օրգանի թոյլտւութիւնը, այլ ոստիկանութիւնը, ժանդարմը և կամ՝ բարձր պաշտօնեաների քմահաճոյքը...

Երբ 1894 թւին գահ բարձրացաւ Նիկոլայ II, ռուսաց ինտելիգենցիայի և գրողների շրջանում լուրեր սկսեցին պտտւել, որ նոր կայսրը տրամադիր է թեթևցնել ցենզուրան և ազատել տպագրական խօսքը նրա սպանիչ ճանկերից։ Սակայն նոր կայսրի օրով ոչ միայն չմեղմացրին ցենզուրական պայմանները, այլ եղածի վրայ աւելացրին մի նոր դժւարութիւն ևս։ Դա հրատարակչական իրաւունքի հարցն է։

Հին օրէնքով՝ լրագրի կամ ամսագրի տէրը կարող էր իր հրատարակութիւնը, իբրև սեփականութիւն, ծախել ում կամենայ, երբ ուզենայ։ Տեսնելով, որ մի քանի օրգաններ այդպիսով անցնում են այնպիսի գրողների ձեռք, որոնք իրեն ցանկալի չեն և որոնք պահելով ձևական խմբագիր՝ իրենք են ուղղութիւն են տալիս օրգանին, կառավարութիւնը 1897-ին փոխեց հին օրէնքը և հաստատեց մի նորը։ Նոր օրէնքով, ոչ մի հրատարակիչ չէ կարող ինքնագլուխ և ազատօրէն վաճառել իր լրագիրը կամ ամսագիրը։ Առաջ նա այդ անում էր պարզ կերպով. հաղորդում էր Տպագրական գործերի գլխաւոր վարչութեան, որ ինքը ծախում է իր լրագիրը այս ինչ մարդուն. նոր հրատարակիչն էլ հաղորդում էր, որ ինքը գնում է այդ լրագիրը։ Ստանալով երկու կողմի այդ տեղեկութիւնը՝ Տպագրական գործի գլխաւոր վարչութիւնը անմիջապէս ուղարկում էր հրատարակչութեան տոմսակ՝ այսինքն սեփականութեան մի պաշտօնագիր՝ նորի անունով, և դրանով էլ վերջանում էր ամբողջ գործը։ Նոր օրէնքը միանգամայն վերացրեց այդ ազատութիւնը։ Այժմ բաւական չէ միայն հաղորդել ի տեղեկութիւն հրատարակչի փոփոխութեան մասին, այլ պէտք է ստանալ և թոյլտւութիւն։ Այսինքն՝ Պետերբուրգից պէտք է հարց առաջարկի տեղական իշխանութիւններին՝ թէ արդեօք այս ինչ անձը, որ ուզում է գնել հրատարակութիւնը, յարմար է թէ ոչ. ուրիշ խօսքով՝ կրկնւում է այն, ինչ որ անւում էր միմիայն խմբագրի հաստատութեան գործում։ Եւ միայն դրական պատասխան ստացած դէպքում թոյլ է տրւում ծախել հրատարակութիւնը, ուրիշ խօսքով՝ փոխել հրատարակչին։ Դուք տեսնում էք, որ այս նոր սահմանափակումը նշանակում է պարզապէս, որ հրատարակիչը, իբր սեփականատէր, այլևս իր սեփականութեան տէրը չէ։ Այդ անարդար, նոյնիսկ ռուսաց հիմնական օրէնքին հակասող կարգադրութեամբ, կառավարութիւնը հասաւ իր գլխաւոր նպատակին — թոյլ չտալ, որ „անցանկալի“ մարդիկ օրգանների տէր դառնան և ուղղութիւն տան...

1897 թւին, երբ հաստատւեց այդ օրէնքը, „Ռուս գրողների դաշնակցութիւնը“ ժողով գումարեց և վճռեց դիմել ներքին գործերի մինիստրութեան ու՝ բացատրելով

նոր օրէնքի ամբողջ անարդարութիւնը, խնդրել վերացնել նրան։ Խնդիրը պատճառաբանուեց շատ հիմնօրէն, և չնայած, որ նա մայրաքաղաքի համարեա բոլոր ռուս գրողների կողմից էր և վայելում՝ էր ամբողջ մտածող Ռուսաստանի համակրութիւնը,—մինիստրութիւնը այնուամենայնիւ չյարգեց, այլ բացէիբաց մերժեց...

Եւ այդ օրից սկսած՝ նոր օրգանի թոյլտուութիւն ստանալը կամ արդէն եղած օրգանի տէր լինելը դարձել է մի անսովոր դժուարութիւն, որին յաղթելու համար պէտք է գերբնական „բախտ“ ունենալ կամ մի մինիստրբարեկամ։ Իսկ ցենզօրների հայրենիքում օրինաւոր գրողը ոչ այս ունի, ոչ այն։ Ուսի և ասպարէզը մնում է Շչեդրինի այն հերոսներին, որոնց տաղանդաւոր երգիծարանը անուանեց՝ „ինչ կը հրամայէք“։

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

(Շարունակութիւն.—տես Nº 3)

Գաղտնի ընկերութիւնները իրենց անհամար ճիւղաւորութիւններով բուն դրին Եւրօպայի զանազան անկիւններում։ Դրանք „դաւադիրներն“ էին, այն ահեղ ու յանդուգն հոգիները, որոնց յաւէտ պիտի փառաբանէ ժողովրդական դիւցազներգութիւնը։ Իտալիայում նրանց անունը կարբոնարի էր, Գերմանիայում՝ „առաքինութեան դաշնակից“, Ֆրանսիայում՝ „ճշմարտութեան բարեկամ“, Յունաստանում՝ „հէթերիա“։ 20-ական և 30-ական թուականները մշակեցին դաւադիր-յեղափոխականի կլասիքական տիպը, որ մենք տեսնում ենք այնուհետև բոլոր մանր ու խոշոր ազգերի ազատագրական շարժումների մէջ։ Ամէն տեղ նման էին դաւադիր ընկերութիւնները. կազմակերպութեան, ձրգտումների ու գործողութիւնների մի բնական համերաշխութիւն կար նրանց մէջ։ Բոլորն էլ միևնոյն յեղափոխական շնչով վարակուած, բոլորն էլ տոգորուած անսահման ատելութեամբ դէպի բռնապետութեան հաստատութիւնը։

Բէակցիայի ճանկերում գալարուելիս՝ նրանց ուրիշ ելք չէր մնում, բայց եթէ բռնել արեան ու զոհողութեան ճանապարհը։ Դա այն շրջանն էր ազատագրական պայքարի, երբ անմտութիւն էր՝ քարոզել սոսկ խաղաղ պրօպագանդ։ Բայց և այն շրջանն էր դա, երբ չէր կարելի ուժի միջոցով դիմագրաւել ուժին, բացարձակ կռուի դուրս գալ ահարկու թշնամու հետ։ Կռիւը չափազանց անհաւասար էր։ Պէտք էր դիմել „ստորերկրեայ“ միջոցների։ Պէտք էր պատսպարուել խաւար անկիւններում և գաղտնի դարաններից երբեմնապէս շանթել թշնամուն անակնկալ հարուածներով։ Դա տէռօրի սիստէմն է, որ մի առանձին խանդով են գրկել ազատութեան մարտիկները բոլոր երկրներում։

Տէռո՞ր... եղաւ այնուհետև բոլոր յեղափոխականների նշանաբանը։ Մի առանձին թովչութիւն ունի այդ բառը բոլոր յուսահատ մաքառողների համար, և նա միշտ եղել է փոքրամասնութեան գերագոյն զէնքը՝ ընդդէմ ճնշող մեծամասնութեան։ Երբ ժողովուրդները յոգնած, ուժասպառ՝ մատնուում էին իսպառ լքուելու վտանգին, կայծակի շանթեր էին պէտք՝ սթափեցնելու նրանց և խրախուսելու վերստին դէպի կռիւ։ Յուսահատական, խիզախ վճիռներ էին պէտք՝ երկիւղ ներշնչելու բռնաւորին և կանգնեցնելու թերևս նրա աւերիչ ձեռքը։ Եւ տէռօրը սկսեց իր արիւնոտ գործը։ Եւրօպական ցամաքի տարբեր կէտերում, մին միւսի ետևից, կարծէք ընդհանուր համաձայնութեամբ, պայթեցին դաւադրական գործողութիւնները, մի տեղ՝ ապստամբութեան ձևով, մի այլ տեղ՝ մասնաւոր եղեռնափորձերի։ Ահա 1819-ին գերմանական Մանհայմ քաղաքում ուսանող Մօրից Զանդ դաշունագարկ է անում ռուս-կայսերական լրտես Կոցեբուին։ Ահա Պարիզում 1820-ին երիտասարդ Լուվել մի հարուածով գետին է փռում գահաժառանգ դուքս Բերրիին. և դեռ քանի՜ քանի՜ յանդուգն դաւեր էին կազմակերպուած միևնոյն Պարիզում... Ահաւասիկ Նապօլի, Տուրինի, Մադրիդի արիւնահեղ ապստամբութիւնները, որոնք տեղի են ունենում գրեթէ միաժամանակ (1820-21)։ Ահա համաշխարհային Բաստիլ Պետերբուրգում պահականոցի մի գունդ ապստամբւում է նոյն վայրկեանին, երբ գարը Տրօպաւի մէջ Մետերնիխի հետ միջոցներ էր խորհում ոչնչացնելու յեղափոխութեան համաճարակը արևմուտքում։ Ահա քիչ յետոյ Ռուսաստանի հարաւում սարսափելի „դեկաբրիստները“ դաւ են կազմակերպում գնդապետ Պէստելի ղեկավարութեամբ, որի նպատակն էր սպանել թագաւորին և հանրապետութիւն հռչակել Ռուսաստանում...

Անհաշիւ են դաւադրութիւններն ու եղեռնափորձերը դարուս առաջին տասնամեակներում։ Արևմուտքից-արևելք, հիւսիսից-հարաւ միևնոյն հոսանքն էր, կամ—բռնապետների լեզուով—միևնոյն „հիւանդութիւնն“ էր, որ անընդհատ նշաձումներ էր անում։ Ամէն տեղ դաւադիրների ու ապստամբների նիրական կոչն էր՝ „Կեցցէ՛ Սահմանադրութիւնը“։ Սակայն գործնական արդիւնք տակաւին չկար։ Անպտուղ էին մնում շատ յեղափոխական ձեռնարկներ։ Նրանք՝ յաճախ դեռ չսկսած՝ վիժում էին, բռնաւորների թունաւոր վրէժխնդրութեանը մատնելով Սուրբ Գործի հեղինակներին։ Այդպէս վիժեցին քսան դաւադրութիւններ, որոնք Պարիզում էին կազմակերպուել։

Յարատև ստրկութեան վարժուած մասսաները դեռ չէին ձայնակցում իրենց գաղափարական զաւակների գոչերին։ Անհատները զոհւում էին հերոսական անձնուիրութեամբ, նոր-նոր էջեր աւելացնելով յեղափոխական մարտիրոսագրութեանը, և վստահ՝ որ իրենց դիակների վրայ կը բանէ ու կ'աճէ հանրային ազատութիւնը...

„Սրբազան Դաշնակցութեան“ լէգէօնները սլացան դէպի ամէն կողմ, ուր զարհուրելի „հիւանդութիւնը“ սպառնական գլուխ էր բարձրացրել։ Նապօլում, Տուրինում, Սպանիայում և ամէն տեղ բարբարոսաբար ճընշեցին ապստամբութիւնները, խեղդեցին դաւադիրներին և դրակօնական օրէնքներով բռնացան ազատ մտքի ամէն մի արտայայտութեան վրայ։ Համալսարանները փակեցին կամ թէ ենթարկեցին անլուր հսկողութիւնների. շատ թէ քիչ ազատամիտ պրոֆէսօրները դուրս քշեցին, „Առաքինութեան դաշնակից“ և բոլոր ուսանողական ընկերութիւնները քայքայեցին, մամուլը ենթարկուեց ցենզուրական անսահման բռնակալութեան, միջնադարեան ինկվիզիցիան իր բոլոր արհաւիրքներով արշաւեց կարբոնարիզմի դէմ։ Եւ գերեզմանա-

կան խաղաղութիւնը պահ մի թագաւորեց Եւրոպայի վրայ։ Այդպէս էին պատիրում „քրիստոնէական ըսկզբունքները“, այդպէս էր թելադրում „Սրբազան Դաշնակցութեան“ գերագոյն շահը...

Վրայ հասաւ Յունաստանի ապստամբութիւնը։

||

Բալկանեան թերակղզին բաւական ժամանակից իվեր յեղափոխական խուլ ագիտացիայի թատր էր։ Թիւրքական անորակելի բռնապետութիւնը այդտեղ աւելի քան անհնարին էր դարձրել մարդկանց խաղաղ ու կուլտուրական կեանքը։ Լուծը առանձնապէս ծանր էր քրիստոնեայ ժողովուրդների համար. սերբ, յոյն, բուլգար, մակեդոնացի, մոլդավ ու վալախ — բոլորն էլ հաւասարապէս ճնշուած — անպատմելի թշուառութեան մէջ ալի արցունք էին թափում։ Ստրկութիւն էր բառիս համարեա տնտեսագիտական նշանակութեամբ, և այդ ստրկութիւնը ամբողջ դարեր տևեց։ Արևմուտքի շառաչալից անցքերը իրենց արձագանքներն ունեցան այդ խուլ, վայրենի անկիւններում, ուր ժողովրդային մասսաները այնքան բթացել էին դգացումներով, այնքան ընտելացել „ռայեայի“ զազիր կացութեան։ Գաղտնի ընկերութիւնները երկար անդուլ աշխատեցին։ Կարբոնարիզմը արևմուտքից մըշտընջենական խրախոյս էր նրանց համար։ Պակաս խրախոյս չէր և այն բուռն համակրութիւնը, որ նրանք ընդունում էին հեռու հիւսիսից, քրիստոնեայ մի պետութիւնից։ Ռուսաց պետական ծառայութեան մէջ փայլուն դիրք ունէին մոլդավ հոսպոդար Իպսիլանտի և յոյն Կապոդիստրիա։ Եւ Հէթերիան տենդային եռանդով գործում էր Բալկաններում, աչքերը յառած միշտ դէպի հիւսիս, վստահ դաւանակից պետութեան աջակցութեան վրայ։

1821-ին Իպսիլանտի՝ թեւաւորուած ցարի հովանաւորութեամբ՝ անցաւ Ռումանիա և փորձեց ոտքի հանել ազգաբնակութիւնը թիւրք կառավարութեան դէմ։ Փորձը վիժեց. ժողովուրդը տակաւին անպատրաստ՝ չշարժուեց տեղից։ Անշարժ չմնաց հին Յունաստանը։ Այդտեղ Հէթերիան իր բազմաթիւ ճիգաւորութիւններով մեծ նեաձումներ էր արել և ժողովուրդը ազդանշանի էր միայն սպասում։ 1821 թ. մարտի 21 մի արքեպիսկոպոս տնկեց Կալավիտրա քաղաքի պարիսպների վրայ անկախութեան դրօշը, և անմիջապէս պայթեց ապստամբութիւնը ամբողջ Մօրէում։ Կառավարութիւնը սոսկաց։ Մահմէտական աշխարհը դղրդաց, ալէկոծուեց։ Զարկեցին ամէն տեղ ահակոչնակը, և արիւնարբու, մոլեռանդ խուժանը՝ միացած զինուորական լեգէոնների հետ՝ սուիններով ու եաթաղաններով գրոհ տուին հելլէնների դէմ։ Զարհուրելի էր կոտորածը, վաղուց նմանը չէր տեսնուած ազգերի տարեգրութեան մէջ։ Պօլսի յոյն պատրիարքին անմիջապէս կախաղան հանեցին իր հաժաղգեստում։ 80 եպիսկոպոսներ ու վարդապետներ տեղնուտեղը սպանուեցին։ Եկեղեցիները թալանուեցին ու փլատակ դարձան։ Հազարաւոր քրիստոնեաներ սրի ճարակ եղան։ Անհաշիւ ջարդեր տեղի ունեցան Կիպրոս, Քիոս ու Կրէտէ կղզիների վրայ, Կէրօնիայում և շատ ուրիշ տեղեր։ Երկիրը լողում էր արիւնի մէջ։ Միմիայն Քիոս կղզում 100 հազար բնակիչներից 47 հազար վաճառուեցին որպէս գերիներ, իսկ մնացածը խողխողուեցին։ Արևան ու կրակի ճարակ դարձան Թէսալիա, Բէոտիա, Ատտիկա։ Յուսահատ մոլեգնութեամբ կռուում էին յոյն ապստամբները, և ոչ ոք դեռ ևս օգնութեան չէր գալիս։ Դժբախտաբար ներքին կռիւները աւելի ևս ծանրացնում էին դրութիւնը։ Շարժումը կազմակերպուած չէր. նա փշրուում էր մի քանի մասնիկների, որոնցից իւրաքանչիւրը իր առանձին առաջնորդն ունէր։ Մի կատարեալ քաղաքացիական կռիւ էր տիրում ներսում։ Իսկ Եւրոպան տարուբերուում էր։ Ոչ մի պետութիւն, նոյնիսկ Ռուսաստանը, չէր վստահանում առանձին միջամտել, իսկ շահերի հակառակութիւնը, դիպլոմատական հաշիւները արգելք էին լինում հաւաքական միջամտութեան։

„Սրբազան Դաշնակցութեան“ բռնած դիրքը առանձնապէս դժուարացնում էր յունական շարժման յաջողութիւնը։ Աւստրիան բացարձակապէս հակառակ էր ոևէ միջամտութեան. Մետերնիխ կարբոնարիզմի ուրուականն էր տեսնում յունական ձգտումներում։ Խիստ փափուկ դրութեան մէջ էր ցար Ալէքսանդր I։ Մի կողմից նա կ՚ուզէր խրախուսել Բալկանեան ազգերի յեղափոխական կռիւը, ազատել նրանց տաճկական տիրապետութիւնից, անդամահատել այդպիսով սուլթանների կայսրութիւնը և բարեյաջող դէպքում տիրանալ նրան։ Այդ էր պահանջում Ռուսաստանի աւանդական շահը. այդպէս էր հրահանգում Պետրոս Մեծի հուչակաւոր կտակը, որ այնքան յաճախ յիշատակւում է դիւանագիտական պատմութեան մէջ և որ իսկապէս ծուծն է կազմում Արևելեան վիթխարի հարցի։ Միւս կողմից՝ իբրև անդամ „Սրբազան Դաշնակցութեան“, նա պիտի հոգար ամենախիստ միջոցներով հանգցնել յեղափոխութեան հրդեհը, ուր որ էլ նա երևար։ Ահա ինչու դեռ 20-ական թուականներից առաջ՝ Հեթէրիայի կողմից Ռուսաստան ուղարկուած Կամիրինոսը, որ պիտի օգնութիւն խնդրէր կոմս Կապոդիստրայից և նրա միջոցով՝ Ալէքսանդր կայսրից, ստիպուեց ձեռնունայն վերադառնալ, առաջ բերելով յոյների մէջ ընդհանուր յուսահատութիւն։ Ահա ինչու 1821 թուին, երբ Իպսիլանտին՝ արդէն գրաւած Եաշա քաղաքը, յատուկ պատգամաւոր ուղարկեց Ալէքսանդր կայսեր մօտ, վերջինս ոչ միայն մերժեց յոյներին օգնութեան հասնելու առաջարկը, այլև խոստացաւ սուլթանին „իր աջակցութիւնը՝ խռովարար յոյներին ճնշելու համար“։ Ահա ինչու Ռուսաստանը տեղից չշարժուեց նոյնիսկ այն ժամանակ, երբ մի փոքր յետոյ թիւրք և ռուս կառավարութեան յարաբերութիւնները այնքան լարուեցին, որ ռուսաց դեսպան Ստրոգանովը ստիպուեց հեռանալ Պօլսից։ Նոյն թշնամութեամբ էին վերաբերում յունական շարժումներին և միւս պետութիւնները։ Այդպէս, օրինակ, 1823 թուին, երբ Վերոնում տեղի ունեցած դեսպանաժողովին ներկայացան Յունաստանի պատգամաւորները, պետութիւնների ներկայացուցիչները նրանց լսել անգամ չուզեցին և արհամարհանքով ճանապարհ դրին։ Այդ դրութիւնը տևեց մինչև 1826 թիւը, երբ վերջապէս յոյների չընդհատուող կռիւը հարկադրեց Ռուսաստանին նախընտրել իր մասնաւոր շահը և հանդիսաւոր կերպով խզել իր կապը „Սրբազան Դաշնակցութեան“ հետ։

Յոյների արդար գատը բուռն համակրութիւններ էր վաստակում Եւրոպական հանրային կարծիքի մէջ։ Թիւրքական գազանութիւնները ցասման ու զայրոյթի մի ընդարձակ բողոք յարուցին արևմտեան երկրներում։ Երիտասարդ Եւրոպան՝ յուսախաբ, կաշկանդուած իր հայրենիքի մէջ՝ մխիթարում ու ոգևորում էր տեսնելով, թէ ինչպէս հեռու արևելքում ժայթքել է ա-

զատութեան հրաբուխը... Մի երկիր, որ եղել է երբեմն քաղաքակրթութեան որբան, այժմ նրան վերածում էին աւերակների կոյտերի։ Մի ժողովուրդ, որ ունեցել է փառահեղ անցեալ և որ իբրև կրող քրիստոնէական քաղաքակրթութեան, մարտնչում էր ասիական ամենապժգալի բռնապետութեան դէմ... Ահա թէ ինչն էր բորբոքում եւրոպացիների հետաքրքրութիւնն ու կարեկցութիւնը։ Սկսեց մի հոյակապ շարժում ինպաստ Յունաստանի։ Բայրոնի ու Շատոբրիանի պէս գրական աստղերը գլուխ անցան այդ շարժման։ Եւրոպայի բազմաթիւ կետրոններում հաստատուեցին յունասէր կոմիտէներ, որոնց կոչումն էր՝ պրոպագանդ անել յունաց ազատութեան համար — և պրոպագանդ՝ ոչ միայն խօսքով։ Լոնդոն, Մարսէլ, Ժընէվ, Ցիւրիխ, Շտուտգարտ, Միւնխէն և այլն դրամական առատ ժողովարարութիւններ էին անում յոյն հայրենասէրների համար և նոյնիսկ կամաւորների խմբեր էին ուղարկում։ Բայրոն, յայտնի է, որ ինքն անձամբ գնաց Յունաստան, իր ամբողջ կարողութիւնն ու անձը նուիրելու յունական դատին, և այնտեղ էլ մեռաւ (1824)։

Տարաբախտաբար յոյները չկարողացան օգտուել այն խոշոր օժանդակութիւններից, որ ժամակարարում էին նրանց Եւրոպայի յունասէրները։ Անաչառ պատմագրողը խաւար գոյներով է նկարագրում յոյն ապստամբապետներից շատերին, որոնք, նախանձից կամ փոխադարձ ատելութիւնից դրդուած, նոյնիսկ կուի ամենակրիտիքական վայրկեաններում դաւեր էին լարում իրար դէմ։ Իգուր վեհանձն Բայրոն աշխատում էր հաշտեցնել այդ հակամարտ տարրերը, որոնք իրար կործանելով՝ թուլացնում էին ժողովրդի ընդհանուր դիմադրական ուժը։

Կռիւը շարունակւում էր։ Սուլթան Մահմուդ սպառել էր իր բոլոր միջոցները և օգնութեան կանչել Եգիպտոսի փաշային, իր վասալին։ Յոյները թէև ընկճուած, արիւնաքամ՝ շարունակում էին դիմադրութիւնն ու յարձակումները։ Թիւրք խուժանի անլուր վայրագութիւնները, հայրենիքի աւերումը, հարիւր հազար նահատակները և ընդհանուր ողբն ու արտասուքը կսկծացնում էին նրանց, բայց չէին սարսափեցնում։ Եւրոպան թևաւորում էր նրանց իր կեցցէներով, իսկ եւրոպական պետութիւնները քար ու ապառաժ էին մնում... Ի՞նչ անել։ Զէնքը ցա՞ծ նետել Եւ նորի՞ց ստրուկ պարանոցը ծռել անարգ թշնամու առաջ։ Բայց դա չափազանց ստորացուցիչ էր ազատութեան մարտիկ-առիւծների համար։ Հազար անգամ գերադասելի էր ամբողջ ազգաքնակութեան խսպառ բնաջնջումը... Այդ էր հէլլէնների գերագոյն վճիռը։ Վրէժխնդրութեան կրակով վառուած՝ նրանք դեռ շատ անգամ կարողացան նեղը ձգել տաճիկներին, շատ յաղթութիւններ տարան։ Բօցարիս, Կանարիս, Միսուլիս դիւցազները իրենց փայլուն հրաշագործութիւններով դարձան թիւրքերի սարսափ և քաղաքակիրթ աշխարհի հիացման առարկայ... Միսօլունգիի յիշատակելի ճակատամարտը վերջին յուսահատական ճիգն էր։ Մօտ 15,000 յոյն բնակիչներ, որոնցից մօտ 6,000-ը զինավարժ, ամրացան իրենց վերջին ապաստանում — Միսօլունգի, որ և պաշարուեց Իբրայիմ փաշայի զօրքերով։ 8 ամսւայ հերոսական դիմադրութիւնից յետոյ՝ բերդն ընկաւ ուժասպառ... և Միսօլունգիի անկման ողբերգը կսկծալից շառաչով անցաւ քաղաքակրթուած աշխարհի վրայից, ցնցեց յունասէրների և ազատութեան բոլոր բարեկամների սիրտը։ Ապաստանածներից մօտ 10,000 հոգի խողխողուեցին, իսկ կենդանի մնացածները վաճառուեցին որպէս գերիներ...

Անցաւ մի տարի, ծանր, յուսահատ, մահաշունչ տարի, երբ սովը՝ միացած թշնամու աննկարագրելի անգթութիւնների հետ, անխնայ կոտորում էին թշուառ յոյներին։ Վերջապէս Անգլիան և Ֆրանսիան՝ երկիւղ կրելով Ռուսաստանի միայնակ միջամտութիւնից, ըշտապեցին համաձայնութեան գալ նրա հետ, և երեք պետութիւնները ստորագրեցին 1827 յուլիս 6 Լոնդոնի դաշնագիրը, որ կրկնում՝ էր 1826 թւի ապրիլի 4-ին կայացած համաձայնութիւնը Անգլիայի և Ռուսաստանի մէջ և որ առաջին քայլն էր դէպի Յունաստանի անկախութիւնը։ Թիւրքիան Աւստրիայի աջակցութեան վրայ յենելով՝ յետ մղեց դաշնագիրը, և մի քանի շաբաթւայ ապարդիւն բանակցութիւններից յետոյ երեք պետութիւնների նաւատորմերը երևացին Նավարինի առջև, ուր գտնւում էր թիւրք-եգիպտական միացեալ նաւատորմը։ Պատերազմը երկու ժամ միայն տևեց և վերջացաւ թիւրքերի լիակատար պարտութեամբ։ Կատաղեց սուլթան Մահմուդը և մի մոլեգին հրովարտակով խաչակրաց արշաւանքի կոչեց բոլոր հաւատարիմ մուսուլմաններին՝ ընդդէմ գեաւուր պետութիւնների և մասնաւորապէս ընդդէմ Ռուսիայի, որը սուլթանների ամենամահացու թշնամի էր դիտւում։

Նիկոլայ կայսրի ուզածն էլ հէնց այդ էր։ Ժամը յարմարագոյնն էր՝ արշաւելու թիւրքի դէմ։ 1828-ին ռուսաց զօրքի մի մասը անցաւ Պրուտ գետը և գրաւեց Մոլդաւ-Վալախիան։ Միւս մասը ուղղուեց դէպի Էրզրում, նուաճելով մի շարք քաղաքներ։ Դիպլոմատիան կանգնեցրեց շտապով Ռուսիայի յաղթական ընթացքը և ստորագրել տւեց Ադրիանապոլսի դաշնագիրը (1829), որով Մոլդաւ-Վալախիան մնում էր սուլթանի գերիշխանութեան տակ և ռուսաց հովանաւորութեան ներքոյ։ Դրանից առաջ Սերբիան ևս Ակերմանի դաշնագրով (1826) ճանաչուել էր իբրև կէս-անկախ մի երկիր տաճկական գերիշխանութեան տակ։ Ամբողջ Տաճկաստանը բաց էր մնում ռուսական ազդեցութեան համար, և այդ էր ռուսաց զէնքի ամենափայլուն յաղթանակը։ Ցարը այնուհետև տէր էր Արևելքում... Նրա ճանկերի մէջ անդարձ կաշկանդուել էր Թիւրքիան շնորհիւ պատերազմական ահագին տուրքերին, որ նա պարտաւորուել էր վճարել ցարին և որ երբէք չպիտի կարողանար հանգցնել։ Ռուսաստանի հովանաւորութեամբ՝ Բալկանեան քրիստոնեայ ազգութիւնները գտնւում էին արդէն ազատագրութեան կէս-ճանապարհի վրայ...

Յունաստանի անկախութիւնը այժմ արդէն կատարուած իրողութիւն էր։ Սկզբներում մի առժամանակ ռուսական ինտրիգները անիշխանութեան մատնեցին երկիրը, բայց վերջապէս 1832-ին Բավարական իշխան Օտտոն I հաստատուեց եւրոպական համաձայնութեամբ իբրև թագաւոր անկախ Յունաստանի։ Այդպէս յարութիւն առաւ մահուան հանգրւանում դեգերող դարեւոր ստրուկը։ Այդպէս ազատուեց՝ նոր կեանք գրկելով՝ գիտութեան կլասիքական երկիրը — ազատուեց՝ ահռելի փորձութիւնների բովից անցնելով, անդուլ, յուսահատ պայքարի, շարունակական արիւնհեղութիւնների միջոցով...

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

ԹԻՒՐՔԻԱՆ ԹԻՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՉԷ. — Սուլթան Համիդի երկիրը շարատանջ եւ տխուր հոգեւարք մը կ'անցնէ. փախող փախողի: Օր չանցնիր որ մարդկային կարաւաններ, իրենց ոտքի փոշին թօթուելով, ընչասպառ չի փախչին Սողոմ Գոմորէն, առանց ետեւնին նայելու, վախնալով Ղովդի կնոջ ճակատագրէն:

Սուլթան Համիդի քննակալութիւնը մարդաթափ կ'ընէ երկիրը. եթէ այսպէս շարունակի, քիչ ատենէն „պոնծէ քաղաք" մը պիտի ըլլայ Պոլիս, ուր մեռելութիւն միայն պիտի տիրէ: Ժամանակով հայերը ստուերի պէս կը տարագրուէին Թիւրքիայէն, այդ անհուն գազանանոցէն: Այս հեւիհեւ ելիցեն մէջ „մորերնուն կաթ'ովը" մնծցած միամիտ թիւրքերը կը նշմարէին Ցաճկաստանի ապահովութիւնը, իսկ Համիդ իրեն համար կ'երազէր երջանիկ օրերու զարունը: Հինգ տարի անցաւ վրայէն, Համիդ կը զգայ թէ իր վարդէ անկողիններուն մէջ փուշեր կան: Հալածանքը այժմ սկսած է թիւրքերուն դէմ: անխնայ կերպով կը հալածէ, կ'աքսորէ, խեղդել կուտայ ամէն անոնք, որոնց դէմին վրայ դժգոհութեան վէտ մը գոյացած է, կամ յանդգնութիւն ունեցած են հեռուէն ու մօտէն փափաքել տիրող ըէժիմին դէմ: Պոլսոյ մէջ մարդիկ ոչ միայն չեն համարձակիր խօսել, այլեւ սիրտ չեն ըներ նոյնիսկ մտածել: Հոն ամբողջ քաղաքի մէջ ոչ միայն իրար կը լրտեսեն բնակիչները, այլ նոյնիսկ... իրենք զիրենք կը լրտեսեն: Բախտաւոր վեհապետ մը, որուն „արեւշատութեան" համար ամբողջ երկիրը գիշեր ցերեկ աղօթքներ միայն կ'ընէ, Ալլահին եւ Յիսուսին միանգամայն:

Անոնք, որոնք Համիդի ճանկը չ'ինկնալու շանսը ունեցած են, կ'ապաստանին արտասահման: Վերջերս ատոնց թիւը (այսինքն անմիջական քանէ կամ աքսորէ ազատածները) զգալապէս շատցաւ, մանաւորապէս բարձր պաշտօնական դասակարգէն:

Այս տարօրինակ երեւոյթը կը յիշեցնէ Փրանսայի յեղափոխութեան առջի օրերը, երբ ազնւականութիւնը անաբեկ խոյս կուտար վերահաս փոթորկէն, որ պիտի աւէր հին ըէժիմը: Տարբերութիւնը անոր մէջ է, որ սուլթանի երեսէն փախչողները հարստահարիչներ, աւազակներ, ժողովրդային թշնամիները չեն, այլ երկրի վիճակին քիչ շատ ցաւակից կարծուածները. ատոր համար չէ կարելի վճռել՝ թէ Թիւրքիան որ կը կրէ մեծ յեղափոխութեան բոլոր ցաւագար նշանները՝ պիտի ունենայ նոյն փրկարար ելքը եւ պիտի յանդգնի՞ նետել նախատուած քաղաքակիրթ աշխարհի առջեւ... սուլթանի մը անպիտան գլուխը:

Դժգոհ տարրն է որ կը հեռանայ, սուլթանը ու իրեններն են որ կը մնան. հետեւապէս այդ կարմիր արշալոյսը պիտի չճառագայթէ գողերու, սրիկաներու երկրին վրայ, որ երթալով աւելի պիտի վատթարանայ եւ աւելի պիտի խրի արիւնի ճահիճին մէջ. ուր զուցէ անշնչանայ ինչպէս անյուսութեան գերեզմանի մը մէջ:

Թիւրք երիտասարդները, պէյերը, ջոջերը, որոնք Եւրոպա կը լեցուին, պիտի յաջողի՞ն հզօր հոսանք մը առաջ բերել Օժիասի ախոռը մաքրելու համար թէ, արեւելքին յատուկ հեշտասիրութեամբ, շուտով կրկին յետ պիտի նահանջեն: Եկող գացողներէն — ուղիղ գծով ետ դարձողներ ալ կան — դեռ մեհեթարական յոյս մը դուրս չեկաւ. ամէնքն ալ Ցաճկաստանէն անյուսութիւն եւ հիասթափութիւն կը բերեն իրենց հետ. ալլահի ստուերը բոլորովին անշուք ըրած է այդ մարդիկը, Ցանդէի դժոխքի բնակիչներուն պէս: Դժբախտ արարածներ են, իրենց սարսափի եւ յուսահատութեան մէջէն չեն կրնար վերակոչել կամքի ուժի հաճոյակատար աղուոր նշոյլ մը:

Համիդ, անընդհատ լրտեսներ, լրտեսապետներ, քէլ Ամէդ ճէլալէդդին փաշան ելն կը դրկէ հաւոգելու որ ետ դառնան՝ խոստանալով անոնց մեծ-մեծ գումարներ: Հին փորձառութիւնը սիրտ չիտար այդ խեղճերուն վերադառնալ, թէ... շատ կը ցանկանային: Հազրէթի շահանէն, տեսնելով դրամ խոստանալը շատ միօրինակ կըլլայ, նորաձեւութիւն ըլլալու համար՝ մէկ քանիներուն, սենիք անամօթութիւնով մը, որ յատուկ է Համիդին, — խոստացեր է „գեղուհիներ" նուիրել: Համիդ լաւ կը ճանչնայ իր արծած երամակին հոգեբանութիւնը եւ ինքզինք կը նկատէ արդէն „Եպիկուրոսի խոզերուն" տէրը:

Ատենով Հռոմի վեհապետներն ալ, ժողովուրդը ժամավաճառ ընելու եւ անբանցնելու համար, հանրային զւարճութիւններու, շայտութիւններու ուժ կուտային եւ այդպէս կը սիրաշահէին ցոփ ու մեղկ խուժանը, որ „հա՜ց եւ թատրո՜ն" կ'աղաղակէր:

Համիդ մեծ վարպետ մըն է մարդիկ անբարոյականացնելու արհեստին մէջ. եւ եթէ մտադրած է կործանել Թիւրքիան, — ինչպէս կը հաւաստեն — ընտրած միջոցը ազդեցիկներէն է. չէ՞ որ սէրը կործանեց Տրովադան:

„Թիւրքիան Թիւրքիոյ մէջ չէ այլեւս", երկիրը կը պարպուի, կը մնան Համիդ ինքը եւ իրենները, ամայի լեռան մը մէջ դարանի կեցած աւազակախմբի մը պէս, ոսկեզօծ անէութեան միօրինակ փիլիսոփայութիւնը որոնելով:

Լուի XV՝ իր երկրին անտանելի վիճակին դարման մ'ընելու անկարող բարութեամբ մէջ, կ'ըսէր. „Ես եւ Թիւրկոն միայն կը սիրենք Փրանսան":

Սուլթան Համիդ, պատմութեան ծաղրածու հեգնութեան առջեւ, Փահիշէ Փաթմայի մը պէս, „պորտը խաղցնելով", իր ամէնակարող շարագործութեամբ կրնայ բացագանչել.

„Մինակ ես եմ որ կը սիրեմ Թիւրքիան"... մէյ մըն ալ Էպիւլ Հիւդան գուցէ:

Անուշիկ երկիր:

* * *

ՉԻՆԱՍՏԱՆ ԵՒ ԹԻՒՐՔԻԱ. — Տիեզերական արհաւիրքի դող մը կանցնի այս բոպէիս մարդկային երակներուն մէջէն: Արեւելքի եւ Արեւմուտքի ընդհարումի երկիւղը հեւքի մէջ կը պահէ թոքերը, ետքաշխարհքի մը չափ զարհուրելի հետեւանքներ զուշակել տալով:

Չինաստանը ապստամբեր է Եւրոպայի դէմ հոս ապըստամբութիւնը իր տեղն է — ալ չի կրնալով հանդուրժել անոնց ներեսութիւններուն, ծաղթութիւններուն եւ անարգանքներուն, որոնք սուտիրաւ ճանծի սպանումը իսկ պատճառ բռնելով կերթան անոր խորին հանգստութիւնը վրդովել, դարաւոր անուշ քունը հատնում ընել, իր աստուածները վախցնել ու փախցնել: Երկնային որդիները չեն սիրած եւրոպացիները, այդ „օտար սատանաները", որոնք իրենց կրօնքով եւ ծայրայեղ պահանջեռով փորձանք կը դառնան:

Չինաստանի ներկայ ապստամբութիւնը այլեւս ծարահատ մարդու մը գերազոյն ճիգն է: Միսիոնարները, որոնք ներսէն կ'ուզեն քանդել մեհեանաձոտ եւ բարոյական կրօնի մը շէնքը, դրսէն պետութիւններու վայրագ շահամրցումը. անոնց չափազանց երեսառութիւնը, ոտնձգութիւնները վերջապէս արթնցուցին Չինաստանը իր դարաւոր քունէն քուն մը, որ անմահ կը կարծէր — եւ ստիպեցին որ համառաստաբ զէնքով պաշտպանէ իր գոյութիւնը, արժանապատուութիւնը:

Չորս հարիւր միլիոն բնակիչ պիտի արթննայ, պիտի յօրանջէ եւ շարժի, որ հողագունդն ալ կրնայ սասանեցնել:

„Դեղին վտանգի" զուշակութիւնը պիտի իրականանայ գուցէ, եւ Եւրոպան, զոր կը կառավարեն քանի մը վաշխառուներ եւ կրօնքի ետեւէ վազող վեհապետներ, շատ հաշտ աչքով չպիտի նայի այդ մեռելազոյն ուրականին վրայ որ իր դէմ կը ցցի նեղ աչքերով, կունտ այտերով եւ իր մազէ ագիովը, որ շաբագուշակ գիսաւորի մը տպաւորութիւնը կը ծգէ:

Ընդհանուր մարդկութեան եւ քաղաքակրթութեան տեսակէտով, անշուշտ ներելի չէ որ ահագին աշխարհ մը դռնփակ մնայ, պատմական իրաւունքի անունով, քանի որ ազգերը, հաղորդակցութիւններու շնորհիւ, այլեւս իրար կապուած են փոխադարձօրէն եւ իրարմով կըլլան: Քաղաքակրթութեան հետեւանքը ատ է, եթէ կուզէք ըսենք „երջանիկ թշուառութիւն" մը կամ „անխուսափելի չարիք":

Օր մը չէ օր մը այդ զոց երկիրները գայթակղութեան քարի մը պէս ոտքերու պիտի գարնէին. նախ կրնան ցաւցնել ու արունել, բայց անհաւանական չէ որ կոխուին նաեւ: Եւրոպան գիտէ ողբերգական դէնքացէքի արարողութիւններ կատարել:

Չինաստանը զոհ է եւ հպարտ իր անցեալով, իր հանապազօրեայ շորցամաք կեանքով, իր գերեզմաններով, ուր մեռելներն իսկ... երջանիկ են:

Դժուար է, շերամի պէս մնտաքսէ նախապաշարումներու մէջ պլլուած, յօժարովին առանձնացած ժողովրդի մը հինին փերփինուած զգացումները, դաւանանքները, սակաւապետ բնազդները՝ մոգական գաւազանով մը յեղաշրջել առանց հակահարուած զգալու:

Չինական միտքը բարոյական պնդացած պատուիրաններէ ալրէն ծալքեր առած է: Դարերու հեռուէն հնչող ձայները դեռ համով կուգան իր ականջին. մահւան սրտայոյզ համակերպութիւնը ունի, այնպէս որ իր երդիքին տակ կեանքի օրանին քովիկը կը պահէ իր դագաղը որուն վրայ կը զուրգուրայ իբր իր յաւիտենական տունը: Ուր է ուր չէ, իր ուխտն է թաղուիլ „ծաղիկներու երկրին" մէջ, իր հայրերու ստուերներուն մօտ, որոնք իր լեզուն կը հասկնան:

Չինաստան աշխատութեան երկիրն է նաեւ: Հողագործ ժողովուրդներու յատուկ բնազդով արմատ բռնած է այդ հողին մէջ, իբր իր ծծկան մայրը, եւ եղած է պահպանողական ու խաղաղասէր: „Երկրի վրայ եղող բնակիչներուն էն խաղաղասէրը եւ կեանքը սիրող են չինացիք", կըսէ Խորենացին, պատմելով միանգամայն անոնց երկրին առատութիւնը, որոնք անծանօթ են հայաստան աշխարհին:

Զարմանալի չէ՞, որ այդքան կեանքի յարած եւ խաղաղ, աւշային ժողովուրդ մը բարբարոսութեան քունի երեւոյթներ ցոյց տայ, ջարդելով, հալածելով եւրոպացիները, մանաւորապէս

միսիոնարները, որոնք... մարտիրոսութեան պսակի ծարաւը ունին:

Պէտք է խոստովանիլ որ այդ արիւնռուշտ անցքերը Եւրոպայի սինիք եւ ազան քաղաքականութեան թունաւոր պտուղներն են:

Անգլիա 50 տարի է աշուձախ կը հարուածէ՝ իր վաճառականութեան տեղ բանալու համար. „աֆիոնի պատերազմը" ապացոյց մըն էր որ արեւմտեան քաղաքակրթութիւնը իր բարձր դերին վրայ չէր, փողն էր իր բարոյական վախճանը: Յետոյ անգլօ-ֆրանսական դաշնակցութիւնը, որով նոր մենաշնորհներ ձեռք ձգեցան եւ իվերջոյ չին-ճաքնական պատերազմը որ բոլորովին սթափեց Երկնային կայսրութիւնը:

Այդ պարտութենէն ետքը, որ գնդասեղի հարուածի մը ցաւը տուաւ միայն, Չինաստան, ինչպէս կերեւի, ոխը փորը պահած, Եւրոպայի դէմ գաղտնի պատրաստութիւն տեսեր է, վեց տարուան մէջ իրագործելով Եւրոպայի սպառազինման բոլոր միջոցները: Եւրոպան նախազգացած չէ ապագայ վտանգը: Մանաւանդ Լիհոնկ Չանկի արեւմուտք պտոյտը բոլորովին լաւատես ըրաւ եւրոպացիները: Շարժումը սկսաւ ամբոխային յարձակումներով, որոնք „կոփամարտիկ" անունը կը կրեն, որուն ծեռքի տակէ քաջալերողը ինքը կառավարութիւնն էր՝ միշտ, իհարկէ, երեւոյթները պարտկելով: Երբ Եւրոպայի պետութիւնները շարած քերանքաց կըսպասէին կամ յախճապակիի շան պէս իրար կը նայէին պիշպիշ, արդէն հրդեհը լայն թեւեր առած էր. իսկ երբ տէրութեանց նաւերը ռմբակոծեցին Թաքուի ամրոցները, չինացիք նշանաբան ընտրեցին „մահ օտարներուն" խօսքը եւ հոն գտնուած վաճառական, դեսպան, միսիոնարներ կոտոր-կոտոր ընել սկսան:

Երբ այս ահռելի տոմարը կը կատարուէր, եւրոպական պետութիւնները – դարուս սկզբաստիքները — դիւանագիտական նրբութիւններով զբաղած, իրենց մարդոց կեանքերը փրկելու տեղ, կը մտածէին՝ թէ „չինական քաղաքէն" ինչ պատառ պիտի խլեն:

Անբարոյականութիւնը այդ աստիճան հասած է:

Աշխարհ սահմռկած է այդ զարհուրելի զարթնումին առջեւ: Ապացոյց է թէ Եւրոպան չէր ճանչցած Չինը, որ գիտէր ծռիլ եղէգին պէս, բարոյական պատուէրի մը համաձայն, ու չի կոտրիլ սակայն:

Դէպքերը զահավէժ արագութիւնով վազեցին, երբ Չինու ներկայ թագուհին, պետական հարուածով մը, իբր Չինաստանի աւանդական բարքերուն եւ օրէնքներուն „պահապան հրեշտակ", զանը բարձրացաւ իր շուրջը հաւաքելով բոլոր „հինօրինաց" մանդարէնները, որոնք ատելով կատէին օտարները:

Թագուհին՝ տեսակ մը առնակին, պալատական էնդրիկներու, նենգամտութիւններու ճշմարիտ թեական մը բացաւ՝ իր վրայ հրաւիրելով աշխարհի ուշադրութիւնը: Արեւելեան Շամիրամ անուանեցին այդ խորամանկ, կանացի քմայքներով ու փառասիրութիւններով օժտուած թագուհին, որ, կերեւի, „սիրականներու" քաղաքականութիւնը մշակեց եւ թեւերը արձակեց այն մոլեռանդ եռումին որ խուլ կերպով կը մժար Չինաստանի կուրծքին տակ: Արեւելքի պատմական բոլոր աշխարհակալուհիները, երբ ուզեր են իրենց տիրած ազգի ճակատագրին հետ խաղալ, անզուսպ կիրք մը ցոյց տալով անսահման փառասիրութեան, այդ ազգին գերեզմանին ճամբան բացած են: Իրենց թագաւորութիւնը շատ փայլանոյշ եւ շատ կարճատեւ եղած է, ինչպէս... գեղանի կնոջ մը յաղթանակները: Գուցէ անոր համար որ սիրահաճ քաղաքականութիւնը շողոքորթներու ըժիտն է, որ կը տիրապետէ թագուհիներու բարեացակամ վարչութեան տակ:

Այդ ներքին անհիշխանական դրութեան մէջ նշանաւոր դեր կը խաղայ նաեւ Թուան իշխանը՝ միւսիւլման աղանդաւոր մը, ճշմարիտ քրիստոնէատեաց մը, որ կ'ուզէ շարժումը իր օգտին գործածել՝ զանը յափշտակելու համար: Ան է՝ որ անձնական դիտումներով այդ շարժումին նպաստելով, սուլթան Համիդի պէս „մահ կեավուլներուն" կը պոռայ, Կոնֆուչիոսի բարոյական եւ մարդասէր խրատներուն փոխարէն Կուրանի մաղձոտ պատուիրաններէն առաջնորդելով:

Սուլթան Համիդ, կըսեն, ամբողջ օրը ուրախութենէն հաց չուտեր, լսելով այդ աւետիսը՝ թէ միւսիւլման իշխան մը կը ջարդէ Եւրոպայի քրիստոնեաները եւ Եւրոպայի իրեն դէմ ըրած նախատինքի վրէժը կը լուծէ: Ուշանուշ ուրախութիւններ էին ասոնք: Անսահման հրճուանք կըզգայ նաեւ խալիֆան, որ Ասիոյ երկու ծայրերը միսիւլման վարչութեան ծեռք պիտի անցնին. արդէն Պոլսոյ լրագիրները համակրութեան ներբողներ կը շռայլեն Չինու գլխուն եւ քրիստոնէութեան վերջալոյսը կ'եզանեն: Թիւրքիան իր գոյութեան օրէն երբէք այդքան սիրտփոքով քէյֆ զգացած չէր. խորունկ էօֆ մը եւ սրտանց օֆ մը կը քաշէ:

Թիւրք պետութիւնը, որ լեզուն փորը քաշած էր ցարդ, քիչ կը մնայ բացարձակապէս յայտարարելու, որ եթէ իսլամ աշխարհը միանայ՝ Եւրոպան թեփի տեղ աւ չի գար: Այսպէս է այս անճոռնի պետութիւնը որուն մէջ փոքր մը ողջմտութիւն չի գտնուիր: Գիտէ՞ք ինչ կերազէ այդ պատուհաս ըէժիմը — եւ ալլահին աղօթքը ատ է — ունենալ այնքան ուժ որ ամբողջ աշխարհ աւերակ ընէ. եւ երբ առիթ գտնեն, ինչպէս կը տեսնենք, չեն քաշուիր իրենց թաք կողմերը մատուակել աշխարհի դժոխք ժպիտը երեսնին: Կան ժողովուրդներ, որ երեխայ են, բայց Թիւրքիան այլանդակ յիսար մըն է:

Որովհետեւ սուլթանի ուրախութեան բրքիչը Եւրոպայի ջղերուն դպաւ – թէեւ այնքան ազնուասիրտ եղած էր անոր նկատմամբ Հայաստանի ջարդերուն ատեն – այդ տպաւորութիւնը փարատելու համար, Փարիզի դեսպանը, Միւնիր ալէյ, իր կառավարութեան անունով կը յայտարարէ բոլոր թերթերուն որ թիւրք կառավարութիւնը խստիւ կը դատապարտէ չինացիներուն վարմունքը եւրոպացիներուն դէմ... Շէպէկի պէս բաց կողմ մը ունի միշտ սուլթանը:

Սուլթան Համիդ միջազգային կատակերգութեան մէջ ատկէց աւելի չէր կրնար վեր թռիլ եւ հրաշալի գաղափար մը տալ Եըլդզի արիւնռուշտ հոգեբանութեան վրայ:

„Դեղին վտանգէն" ետքը՝ „սեւ վտանգը" կայ – այսպէս անուանենք իսլամական վտանգը: Եւրոպան ծայրագոյն արեւելքէն զօրաւոր դաս մը զուցէ բերէ հետը. իր գաւակներու արիւնը թերեւս յիշեցնէ իրեն ուրիշ արիւններ, եւ նա ստիպուի վճռական ուղղութիւն մը ընդունիլ Թուաններու ու Համիդներու, արիւնարբու մոլեռանդութեան այդ սինլբոր ուշմտաշողներու վերաբերմամբ, որոնց մէկը հարէմներու զրկէն հրամաններ կարձակէ, միւսը ժողովուրդի խեղճութիւնը իր օգտին կը շահագործէ: Եւրոպան իր ականջին օղ պիտի ընէ այս անցուդարձերը, եթէ ինքն ալ Համիդներէ չէ բաղկացած եւ կուզէ որ ազգերու ապահովութիւնը ամէն օր աշխարհի աս ու ան անկիւնը չխանգարուի:

Դերմանիոյ կայսրը, երբ իր դեսպանի սպանումի լուրը լսեց Փէքինի մէջ, Աստուած զեռին իրար անցուց նորէն, ելեւտրացուց իր զինուորները՝ պատուիրելով որ երթան, յանուն „մարդկութեան" եւ „քաղաքակրթութեան" պատժեն „չարագործները" երկաթէ ծեռնոցներով անշուշտ, իբր թէ չինացիները թնդանօթի մուս ըլլային միայն կամ ծեռքերնին կապ ըլլար:

Յաւիտենական աստուածային կատակերգուն, ինչպէս է Կիյոմը, խելքը թոցուց իր մէկ դեսպանի սպանումին վրայ եւ պատրաստ էր նոյնիսկ դժոխք գնալ եւ սատանայ մկրտուիլ՝ երկնային կայսրութիւնը փշրելու համար: Սակայն վեհապետի մը չափ տմարդի ըլլալ չենք ուզեր անմեղ սպանութեան մը վրայ ծիծաղելով, ինչպէս ինքը եւ իր ընտանիքը ըրին, երբ հարիւր հազարաւոր հայերու արիւնը կը հոսէր Համիդի ծեռքով...

Տեղն էր որ սուլթան Համիդ իր եւ իր հարէմներուն լուսանկարը ղրկէր Թուան իշխանին միջազգային կամ աւելի գերմանական տրամաբանութիւնը յարգած ըլլալու համար:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

***

Տաճիկների կողմից Նորերս Պոլսում հրապարակ եկան երեք յայտագրութիւններ կառավարութեան դէմ: Դրանցից երկուսը կրում են „Օսմանեան Ազատամիտ Կեդրոնական Կոմիտէի" կնիքը և ուղարկուած են՝ մէկը մեծ պետութիւնների դեսպաններին, միւսը՝ սուլթանին և Բարձր Դրան: Երրորդ յայտագրութիւնը, որ փակցրած էր փողոցների պատերին, մեղադրում է կառավարութիւնը պաշտօնեաներին ռոճիկ չվճարելու համար:

Դեսպաններին ուղղուած յայտագրից բերում ենք հետեւեալ կտորները.

„Արդի դրութեան չարունակութիւնը կարող է միայն շատ տխուր հետեւանքների բերել, եւ մենք, յանուն ընդհանուր խաղաղութեան, անում ենք այս հանդիսաւոր դիմումը՝ միանալով մարդասիրական եւ հայրենասիրական զգացմունքներով ինչպէս հայերի, նոյնպէս եւ յոյների ու ուրիշ զանազան կրօնների եւ ազգութիւնների պատկանող օսմանցիների հետ:

Օսմանեան Ազատամիտ Կեդրոնական Կոմիտէն յոյս ունի օգուտ Տաճկաստանի բոլոր դաշնակից եւ բարեկամ պետութիւնների աջակցութիւնից ընդհանուր բարեփոխումներ երկրում մուցնելու համար, — բարեփոխումներ, որոնց անհրաժեշտութիւնը զգային իրենք մեծ պետութիւնները եւս վերջին արիւնահեղութիւններից յետոյ:

Օսմանեան Ազատամիտ Կեսրօնական Կոմիտէն պատիւ ունի ինդրելու պր. դեսպաններին ինկատի առնել այս դիմումը, եւ յայտարարում է, որ նա ոչ մի կերպ չի տատանուիլ ձգտելու իր բարձր եւ սուրբ նպատակին — հայրենիքի ազատութեան, որի համար կը դիմի ամէն տեսակ միջոցների“։

* *

Տաժատ Մահմուտ փաշայի (սուլթանի քեռայրը) անգլիերէն լեզուով հրատարակած The Eastern World (Արեւելեան աշխարհը) անուն շաբաթաթերթին առաջին թիւը ստացած ենք։ Թերթը կը զբաղի միմիայն սուլթանի խայտառակ վարչութեան քննադատութիւնով եւ միւսիւլման աշխարհով։ Իրեն նշանաբան ընտրած է ճշմարտութիւնը... միշտ ճշմարտութիւնը, պտուղ մը, որ թիւրքիոյ մէջ չի բուսնիր իր... դառնութեան համար։ Ուրիշ անգամ խօսելու առիթ կունենանք այս թերթի մասին։

Լրագիրները կը հաղորդեն նաեւ, որ երկու ալբանական հայրենասէրներ սկսեր են հրատարակել Կայիրէի մէջ թիւրքա-ալբան-ֆրանսերէն լեզուներով Murchid լրագիրը, որը կը պահանջէ Ալբանիայի համար ինքնավարութիւն՝ սուլթանի հովանաւորութեան տակ։

* *

Պ. Զերաղը L'Arménie թերթում յայտարարում է.

„Արմէնիայի“ խմբագիրը ուղղել է մեզ յունիսի 7-ից մի նամակ, որը անպատասխան է „Միութիւն“ լրագրի առաջարկութեան (բոլոր յեղափոխական կուսակցութիւններից Փարիզում մի համաժողով գումարել)։ Մենք նախապատրաստում ենք այս մերժումը այն լոութեան, որ պահպանում են „Հնչակը“ եւ „Մարտը“, բայց ոչ այն բարեյօժար համաձայնութեան, որ յայտնեց „Դրօշակը“... եւ սրը, ինչպէս եւ մենք, զգում է ազգային ուժերի կեսրօնացման անհրաժեշտութիւնը“։

ԹԵՐԹՕՆ

ՄԱԹԷՕ ՖԱԼԿՕՆԷ

ՊՐՕՍՊԷՐ ՄԵՐԻՄԷ-Ի *)

(Ազատ թարգմանութիւն)

—

Երբ մարդ Պօրտօ-Վեչիոյից գնում է դէպի Կօրսիկա կղզու խորքերը, նկատում է, որ երկիրը սկսում է զառիվեր բարձրանալ, և երեք ժամ ոլորապատ, դար ու փոս, քարքարոտ շաւիղով անցնելուց յետոյ՝ հասնում է մի ընդարձակ ծմակի։

Այս ծմակն է վայր և պատսպարան կօրսիկեան հովիւների և այն բոլոր մարդկանց, որոնց հալածում է իշխանութիւնը։

Եթէ դու մարդ ես սպանել, գնա՛ Պօրտօ-Վեչիոյի ծմակը։ Այնտեղ դու կարող ես՝ մի լաւ հրացան և բաւականաչափ վառօդ ու գնտակ հետդ՝ ապահով ապրել։ Հովիւները քեզ կաթ ու պանիր կը մատակարարեն, և դու կառավարութիւնից կամ սպանուածի ազգականներից վախենալու ոչինչ չես ունենայ, եթէ ստիպուած չես քաղաք իջնել՝ զինամթերք գնելու համար։

18...-ին, երբ ես գնացել էի Կօրսիկայ, Մաթէօ Ֆալկօնէի տունը գտնւում էր այս ծմակից կէս ժղոն հեռու։ Նա իր կողմերում բաւական հարուստ մարդու համբաւ ունէր և ապրում էր ազնուականի պէս, այսինքն, ոչինչ չէր անում, այլ օգտւում էր իր բազմաթիւ հօտերի հասոյթից։

Ես նրան տեսայ երկու տարի անց այն դէպքից, որ պիտի պատմեմ այստեղ։ Այդ ժամանակ նա հապիւ 55 տարեկան լինէր։ Նա փոքր, բայց ուժեղ մարդ էր. սև, գանգուր մազերով, արծուաքիթ, նուրբ շրթունքներով, աչքերը մեծ և կենդանի։ Նրա հմտութիւնը հրացանաձգութեան մէջ համարւում էր արտակարգ մի երևոյթ նոյնիսկ իր երկրում, ուր շատ լաւ հրացանաձիգներ կան։ Հարիւր քսան քայլի վրայ նա խփում էր վայրենի ոչխարին՝ գլխից կամ որտեղից որ ուզենար։ Նա գիշերն էլ զէնք բռնեցնելու մէջ նոյնքան վարժ էր, որքան ցերեկը. օրինակ՝ ութսուն քայլի վրայ դնում էին մի վառած մոմ՝ թափանցիկ թղթի յետևը. նա նշան էր դնում. ապա հանգցնում էին մոմը, և մի րոպէ սպասելուց յետոյ՝ կատարեալ մթութեան մէջ՝ նա կրակ էր տալիս ու ծակում թուղթը։ Զորսից հազիւ մէկն էր խլատում։

Այսպիսի հազւագիւտ շնորհքի պատճառով՝ Մաթէօ Ֆալկօնէն մեծ համբաւ էր ձեռք բերել։ Նրա մասին պատմում էին, որ նա նոյնչափ լաւ ընկեր է, որչափ և վտանգաւոր թշնամի։ Սիրով օգնում էր ու ողորմութիւն տալիս, և այդ պատճառով ապրում էր Պօրտօ-Վեչիոյի բոլոր բնակիչների հետ բարեկամական յարաբերութեան մէջ։ Ցայտնի էր նոյնպէս, որ Կօրտէում, որտեղից Մաթէօն կին էր առել, նա ճարպիկ կերպով ազատել էր մի հակառակորդից, որը նոյնքան ահաւոր էր կուի մէջ, որքան և սիրոյ։ Գոնէ Մաթէօյին են վերագրում այն գաղտնի գնդակը, որ սպանեց հակառակորդին, երբ սա լուսամուտի մօտ, մի հայելու առաջ, իրեն սափրում էր։

Նրա կինը — Ջիւզէպպան — սկզբից ծնեց երեք աղջիկ։ Այս հանգամանքը շատ զայրացրեց նրան, մինչև որ վերջապէս ունեցաւ մի տղայ, որին Ֆորտունատտօ անուանեց։ Այս տղան էր ընտանիքի յոյսը, անուան ժառանգը։

Աղջիկները բոլորը արդէն լաւ տեղեր մարդու էին գնացել. նրանց ամուսինների սրի ու ատրճանակի վրայ Մաթէօն վստահ էր։ Տղան դեռ տասը տարեկան էր, բայց արդէն շատ շնորհքներ էր ցոյց տալիս։

Մի անգամ, աշնանային մի օր, Մաթէօն իր կնոջ հետ կանուխ գնացին սարը՝ իրենց հօտերին այց։ Փոքրիկ Ֆորտունատտօն էլ ուզում էր հետները գնալ, բայց հայրը չթողեց, որովհետև տունը պահող պէտք էր։

Հայրը արդէն մի քանի ժամ էր, ինչ հեռացել էր, երբ փոքրիկ Ֆորտունատտօն՝ հանգիստ պառկած արևի տակ, նայում էր կապոյտ լեռներին ու երազում՝ թէ ինչպէս ինքը, կիրակի օրը, քաղաքում իր հօրեղբօր տանը լաւ բաներ պիտի ուտէ։ Ցանկարծ հրացանաձգութեան մի քանի որոտալից ձայներ ընդհատեցին նրա երազները։ Նա կանգնեց և մի հայեացք գցեց դէպի դաշտը, որտեղից գալիս էին այդ ձայները։ Մէջէմէջ յաջորդեցին իրար դարձեալ մի քանի հրացանաձգութիւններ, որոնք քանի գնում, աւելի մօտիկ էին լսւում։ Վերջապէս այն

*) Ֆրանսիացի վիպագիր Միրիմէն (1803–1870) այս պատկերը առաջարկում ենք մեր ընթերցողներին իբր իրական կեանքից վերցրած մի ճշգրիտ նկար, որ ցոյց է տալիս՝ թէ ինչպէս են նայում ուրիշ երկրներում մատնութեան վրայ։ ԽՄԲ.

շաւիղի վրայ, որ դաշտից դէպի Մաթէօյի տունն էր ձգւում, երևաց մի մարդ, որ լեռնականի պէս մի սուր գլխարկ ունէր. մեծ միրուքով, ցնցոտիներով ծածկւած՝ նա հազիւ էր իրեն քարշ տալիս, յենւելով իր հրացանի վրայ. հէնց քիչ առաջ նա գնդակի մի վէրք էր ստացել: Դա մի փախստական էր, որ գիշերը եկել էր քաղաք վառօդ գնելու, բայց ճանապարհին, կօրսիկեան զինւորներից պաշարւել, հալածւել էր: Մի քաջ դիմադրութիւնից յետոյ՝ յաջողւել էր նրան փախուստ տալ և միևնոյն ժամանակ, ժայռից ժայռ անցնելով, իր հալածողների վրայ հրացան արձակել: Բայց զինւորները դեռ ևս հետևում էին նրան, և վէրքի ծանրութիւնը յուսալ չէր տալիս, որ նա կարող է նախ քան բռնւելը իրեն գցել ծմակը:

Նա մօտեցաւ Փօրտունատտոյին և հարցրեց.

— Դու Մաթէօ Փալկոնէի տղա՞ն ես:

—Այո՛:

— Ես Ջիանէտտո Սանպիերօն եմ: Ես՝ զինւորներից հալածւած՝ փախչում եմ. պատսպարիր ինձ. ես էլ ոյժ չունեմ առաջ գնալու:

— Ի՞նչ կ'ասէ ինձ իմ հայրը, եթէ ես առանց նրա թոյլտւութեան քեզ պատսպարեմ:

— Նա կ'ասէ, որ դու լաւ ես արել:

— Ո՞վ գիտէ:

— Թագցրո՛ւ ինձ շուտով, զինւորները գալիս են:

— Սպասիր մինչև հայրս գայ:

— Սպասե՞մ... Անէ՛ծք: Հինգ րոպէից յետոյ նրանք կը լինեն այստեղ: Շո՛ւտ, թագցրո՛ւ ինձ, թէ չէ կըսպանեմ քեզ:

Փօրտունատտոն մեծ սառնութեամբ պատասխանեց.

— Քո հրացանը դեռ լցած չէ, համ էլ փամփուշտ չունես պայուսակումդ:

— Հօ դաշոյն ունեմ:

— Բայց որ չե՞ս կարող ինձ պէս արագ վազել:

Փօրտունատտոն մի թռիչք գործեց և հեռացաւ նրա մօտից:

— Դու Փալկոնէի տղան չես. միթէ՞ պիտի թողնես, որ ինձ բռնեն քո տան առաջ:

Երեխան կարծես զգացւեց:

— Ի՞նչ կըտաս ինձ, եթէ քեզ թագցնեմ, ասաց նա նորից մօտենալով:

Փախստականը որոնեց մի բան իր կաշէ տոպրակում, որ կախած էր գօտիից, և հանեց մի հինգ ֆրանկնոց, որով երևի վառօդ պիտի գնէր:

Փօրտունատտոն ժպտաց, երբ տեսաւ փողը, վերցրեց և ասաց Ջիանէտտոյին — մի վախեցիր:

Իսկոյն նա իրենց տան մօտ եղած խոտի դէզի մէջ մի մեծ անցք փորեց: Ջիանէտտոն մտաւ դէզի մէջ: Երեխան նրան խոտով այնպէս ծածկեց, որ հազիւ շունչ քաշել կարելի էր և անհնար էր իմանալ՝ թէ այնտեղ մարդ կայ թագնւած: Աւելին: Նա բերեց մի կատու իր ձագերով և դրեց թագստի տեղի վրայ, որպէս թէ երկար ժամանակ է, որ այդտեղ ձեռք չէ տւած: Իսկ երբ նկատեց, որ արեան կաթիլներ կան դէպի տուն տանող շաւիղի վրայ, իսկոյն այդ բոլորը հողով ծածկեց, հետքերը կորցրեց և խորին հանդարտութեամբ նորից պառկեց արևի տակ:

Եւ ահա մի քանի րոպէ յետոյ՝ մի մեծաւորի առաջնորդութեամբ՝ համազգեստ հագած վեց մարդ երևացին: Նրանք կանգնեցին Մաթէօյի տան առջև: Մեծաւորը հեռու ազգական էր Մաթէօյին. Թէօդորօ Գամբա էր անունը: Սա մի գործունեայ մարդ էր, որից փախստականները շատ էին վախենում:

— Բարի լոյս, փոքրիկ բարեկամս,—ասաց նա մօտենալով Փօրտունատտոյին, — ինչպէ՞ս մեծացել ես դու: Այստեղից մարդ չանցա՞ւ:

— Օ, ապեր, ես դեռ այնքան մեծ չեմ, որքան դու պատասխանեց երեխան շատ միամիտ դէմքով:

— Բան չկայ, կը մեծանաս. բայց ասա, սիրելիս, չտեսա՞ր այստեղով մի մարդ անցնելիս:

— Այստեղով մի մարդ անցնելի՞ս:

— Այո, այո, մի մարդ՝ սուր գլխարկով և դեղնագոյն բաճկոնով:

— Մի մարդ սուր գլխարկով և դեղնագոյն բաճկոնո՞վ:

— Այո, շուտ պատասխանիր և մի կրկնիր իմ հարցերը:

— Այսօր առաւօտ մեր տէրտէրը իր Պիէրօ ձիու վրայ անցաւ մեր դռնով: Նա հարցրեց ինձ, թէ ինչպէս է հայրդ, ես էլ պատասխանեցի:

— Է՛յ դու փոքրիկ անպիտան. ձեռ՞ք ես գցել ինձ: Ասա՛, ո՞ւր գնաց Ջիանէտտոն. նրան մենք որոնում ենք, և ես գիտեմ, որ նա այս ճամբով անցաւ:

— Ո՞վ գիտէ:

— Ով գիտէ՞... Ես գիտեմ, որ դու նրան տեսել ես:

— Միթէ՞ մարդ կարող է տեսնել անցորդներին, երբ քնած լինի:

— Դու չէիր քնել անպիտան. հրացանի ձայները քեզ զարթնեցրել էին:

— Դու կարծում ես, ապեր, որ ձեր հրացանները մեծ աղմուկ ե՞ն հանում: Իմ հօր ատրճանակի աղմուկը աւելի զօրեղ է:

— Սատանան քեզ տանի, անիծեալ: Ես հաստատ գիտեմ, որ դու Ջիանէտտոյին տեսել ես: Կարելի է մինչև իսկ, որ դու նրան թագցրել ես: Շուտով, ընկերներ, դէպի տան ներսը: Տեսէք, գուցէ նա այնտեղ է: Նա հազիւ էր մի ոտքով քարշ գալիս և այնքան խելօք է, որ դժւար թէ փորձէր մինչև ծմակը հասնել: Բացի դրանից՝ արեան հետքերը վերջանում են այստեղ:

— Ի՞նչ կ'ասէ հայրս—հարցրեց Փօրտունատտոն արհամարհական ժպիտով — երբ իմանայ, որ իր բացակայութեան ժամանակ՝ իր տունը մարդ է մտել:

— Անպիտա՛ն—ասաց մեծաւորը՝ քաշելով նրա ականջը—դու գիտես, որ միայն ինձնից է կախւած լեզուդ փոխելը: Երևի երբ քեզ սրի շեղփով մի տասը հարւած տամ, այնուհետև դու լաւ կը խօսես:

Փօրտունատտոն շարունակ ծիծաղում էր:

— Մաթէօ Փալկոնէն է իմ հայրը, ասաց նա հպարտ կերպով:

— Ես քեզ բանտ կը դնեմ, ոտքերիդ շղթայ կը զարնեմ. ես քեզ գլխատել կըտամ, եթէ չ'ասես, թէ ո՞ւր է Ջիանէտտոն:

— Երեխան այս սպառնալիքի վրայ կրկին ծիծաղեց և նորից ասաց.

— Մաթէօ Փալկոնէն է իմ հայրը:

Զինւորները արդէն խուզարկել էին տունը և ոչինչ չէին գտել: Փոքրիկ Փօրտունատտոն փայփայում էր իր կատուն և կարծես չարախնդրութեամբ դիտում էր շփոթւած զինւորներին:

Զինուորներից մէկը մօտեցաւ խոտի դէզին։ Նա տեսաւ կատուն և անփոյթ կերպով իր սուինը խրեց դէզի մէջ, բայց անմիջապէս հեռացաւ ուսերը վեր քաշելով, կարծես ինքն իր վրայ ծիծաղելով՝ իր այդ զգուշութեան համար. խոտի մէջ ոչինչ չշարժուեց և երեխայի դէմքը չ'արտայայտեց ամենափոքր յուզում անգամ։ Մեծաւորը և իր խումբը գլուխները կորցրել էին և արդէն տրամադրուած յետ գնալու՝ նրանք նայում էին դէպի դաշտի այն կողմը, որտեղից եկել էին։ Մէկ էլ Գամբան մտածեց վերջին ճիգը գործ դնել և մի կողմ թողնելով իր սպառնալիքները, որոնք չէին ազդում երեխայի վրայ, սկսեց քաղցր խօսքերով ու նէբրներով փորձել մի բան իմանալ։

— Սիրելիս, դու մի լաւ տղայ ես երևում. քեզանից մարդ դուրս կը գայ։ Եթէ չվախենայի, որ հօրդ ցաւ կը պատճառեմ, քեզ կը վերցնէի հետս։

— Փա՜հ։

— Երբ Մաթէօն տուն գայ, ես նրան կը պատմեմ այս ամէնը, և նա, քո սուտ խօսալուդ համար, քեզ մի լաւ կը ծեծէ։

— Ո՞վ գիտէ։

— Կը տեսնես... Բայց ինչո՞ւ. լաւ տղայ եղիր, և ես քեզ բան կրտամ։

— Ապե՛ր, ես քեզ մի խորհուրդ կրտամ. եթէ դու դեռ երկար այստեղ մնաս, Ջիանէտտօն ծմակը կը հանի և այնուհետև նրան բռնելու համար քեզ պէս քաջեր շատ կը հարկաւորուեն։

Մեծաւորը հանեց գրպանից մի արծաթէ ժամացոյց և շղթայից բռնելով՝ Փորտունատտոյի աչքերի առաջ շարժեց։

Երեխայի աչքերը փայլատակեցին։

— Զարաճճի, չե՞ս ցանկանայ մի այսպիսի լաւ ժամացոյց վրադ կախել. այն ժամանակ դու գոռոզ-գոռոզ կը քայլես փոցողներով, և երբ մարդիկ քեզ կը հարցնեն՝ ժամը քանիսն է, դու հպարտութեամբ կը պատասխանես — ժամացոյցիս նայեցէք։

— Երբ ես մեծանամ, իմ հօրեղբայրը ինձ ժամացոյց կրտայ։

— Այո՛, բայց քո հօրեղբօր տղէն ունի արդէն մի ժամացոյց. թէև նրանը սրա պէս լաւ չէ, բայց չէ՞ որ նա էլ քեզնից դեռ փոքր է։

Երեխան հառաչեց։

— Դէ՛հ, չե՞ս ուզում այս ժամացոյցը, սիրելիս։

Երեխան գրաւած նայում էր ժամացոյցին, բայց ձեռքը չէր մեկնում դէպի նա։

— Ինչո՞ւ ես ծիծաղում ինձ վրայ, հարցրեց երեխան։

— Ասուած վկայ, ես քեզ չեմ ծաղրում. ասա միայն ո՞ւր է Ջիանէտտօն, և ժամացոյցը քոնը կը լինի։

Փորտունատտոն անվստահ ծիծաղեց և աչքերը գցեց մեծաւորի աչքերին, կարծես ուզում էր իմանալ, կարելի է հաւատալ նրա խօսքերին թէ ոչ։

— Պաշտօնս վկայ, ասաց Գամբան, որ կը տամ ժամացոյցը. ընկերներս թող վկայ լինին իմ խոստումիս։

Այս ասելով նա ժամացոյցը աւելի և աւելի էր մօտեցնում երեխային։ Սրա դէմքի գծերը արտայայտում էին ագահութեան և հիւրասիրութեան հոգեկան կռիւ, որ տեղի էր ունենում նրա մէջ։ Փորտունատտոյի մերկ կուրծքը անհանգիստ բարձրանում իջնում էր. իսկ այդ միջոցին ժամացոյցը ճօճում էր նրա աչքերի առջև և երբեմն շոյում քթի ծայրը։ Մէկ էլ աջ ձեռքը մեկնեց դէպի ժամացոյցը, մատներով շօշափեց և ամուր բռնեց։ Մեծաւորը դեռ բաց չէր թողել շղթան... Ժամացոյցի համարները կապոյտ էր... կափարիչը փայլուն, որ շողում էր արևի տակ կրակի պէս... Փորձութիւնը շատ մեծ էր։ Վերջապէս Փորտունատտոն բարձրացրեց ձախ ձեռքը և բթամատը դէպի յետ ուղղելով, ուսի վրայով ցոյց տուեց խոտի դէզը։ Մեծաւորը հասկացաւ նրան. նա իսկոյն բաց թողեց շղթան, և Փորտունատտոն ժամացոյցի տէրն էր արդէն։ Երեխան իսկոյն վեր ցատկեց իր տեղից և հեռացաւ դէզից։

Զինուորները վրայ թափուեցին և սկսեցին խոտը յետ տալ։ Ցանկարծ դուրս եկաւ Ջիանէտտօն՝ դաշոյնը ձեռքին, բայց իսկոյն վայր ընկաւ, չկարողանալով կանգնել ոտքի վրայ։ Զնայելով նրա դիմադրութեանը, նրան իսկոյն ամուր կապեցին։

Ջիանէտտօն գետնի վրայ պառկած՝ դարձրեց գլուխը դէպի Փորտունատտոն ու արհամարհանքով ասաց. „Օ, ...ի ծնունդ"։ Երեխան նրա վրայ գցեց հինգ ֆրանկնոցը, կարծես զգալով, որ այլևս իրեն չէ կարող պատկանել այդ փողը։ Զինուորները զբաղուեցին կալանաւորի համար պատգարակ պատրաստելու։ Վիրաւոր Ջիանէտտօն անկարող էր քաղաք գնալ և նրան պէտք է տանէին այդ պատգարակով։

Այս միջոցին շաւիղի ծայրին երևացին Մաթէօն և իր կինը։ Նա զինուած էր, ինչպէս կօրսիկացի, որ առանց զէնքի մի քայլ չի փոխի։ Նա զարմացաւ, երբ նկատեց որ իր տան առաջ զինուորներ կան, բայց չվախեցաւ։ Եւ ինչի՞ց պէտք է վախենար նա. հրացանը ուսին, ատրճանակները մէջքին, կինն էլ միշտ պատրաստ օգնելու, ինչպէս կօրսիկացի կին, հրացանը լցնելու գործում։ Նա վստահ դիմեց դէպի տուն։

Մեծաւորը տեսնելով, որ Մաթէօն զինուած գալիս է, վախեցաւ թէ մի գուցէ Ջիանէտտօն նրան ընկեր կամ բարեկամ լինի. այն ժամանակ ո՞վ կարող էր ազատուել Մաթէօյի գնդակներից։ Այս ծանր դրութիւնից դուրս գալու համար նա վճռեց դիմաւորել Մաթէօյին և ամէն ինչ պարզել։

— Օ՜, հին բարեկամ—ասաց մեծաւորը նրան դիմաւորելով — ի՞նչպէս է իմ քաջը։ Ես քո ազգականներից եմ, Գամբա։

Մաթէօն ոչինչ չպատասխանեց։

— Բարև, սիրելի եղբայր — ասաց մեծաւորը ձեռքը մեկնելով դէպի նա,—վաղուց է, որ քեզ չեմ տեսել։

— Բարև, եղբայր, պատասխանեց Մաթէօն։

— Մենք այսօր շա՜տ քարշ եկանք, բայց իրաւունք չունենք մեր յոգնածութեան վրայ գանգատուելու. մենք այսօր մի անգին որս ունեցանք. հէնց հիմա բռնեցինք Ջիանէտտօ Սանպիերօն։

— Փա՜ռք Աստծուն,— վրայ բերեց Ջիւզէպպան,—նա անցեալ շաբաթ գողացաւ մեր կթան այծը։

Այս խօսքերը ուրախացրին Գամբային։

— Խե՜ղճ տղայ, — ասաց Մաթէօն — նա քաղցած է եղել։

— Նա առիւծի պէս էր պաշտպանուում. զինուորներից մէկին սպանեց, մէկին վիրաւորեց և իվերջոյ այնպէս ճարպիկ կերպով թագնուեց, որ սատանան անգամ չէր կարող իմանալ տեղը։ Առանց սիրելի Փորտունատտոյի մենք նրան երբեք չէինք կարող գտնել։

— Փօրտունատտօ՞ն, գոչեց Մաթէօն։

— Փօրտունատտօ՞ն, կրկնեց Ջիւզէպպան։

— Այո՛, Ջիանէտտօն այս դէզի մէջն էր պահուիլ. փոքրիկ Փօրտունատտօն ցոյց տուեց թաքստի տեղը։ Ես նրան շա՛տ երախտապարտ եմ։ Թէ քո և թէ նրա անունը պիտի մոցնեմ այն յայտարարութեան մէջ, որ պիտի տամ ընդհանուր, դատախազին։

— Անէ՛ծք, մրմնջաց ինքնիրեն Մաթէօն։

Նրանք մօտեցան զինուորներին։ Ջիանէտտօն պառկած էր արդէն պատգարակի վրայ, որով պէտք է նրան տանէին։ Երբ Ջիանէտտօն տեսաւ Մաթէօյին Գամբայի հետ, ժպտաց մի օտարոտի ժպիտով. յետոյ երեսը դարձնելով դէպի տան դուռը, թքեց շէմքին ասելով. — „Մատնիչի տուն“։

Միայն մահը աչքի տակ առած մարդը կարող էր համարձակուել „մատնիչ“ խօսքը արտասանել Փալկօնէի երեսին։ Դաշոյնի մի հարուած բաւական կը լինէր անպատուութիւնը անմիջապէս մաքրելու, բայց Մաթէօն ոչինչ չարեց. նա միայն ձեռքը դրեց ճակատին և մնաց անշարժ, ինչպէս քարացած։

Փօրտունատտօն, տեսնելով հօր գալը, տուն էր մտել։ Նա շուտով կրկին դուրս եկաւ ձեռքին բռնած կաթով լի մի փարչ։ Աչքերը քաշ գցած, նա առաջարկեց կաթը կալանաւորին։ „Հեռո՛ւ ինձնից“ —գոչեց վերջինը սարսափելի ձայնով։ Յետոյ դառնալով զինուորներից մէկին, ասաց մեղմ ձայնով. „Բարեկամ, ինձ խմելու մի բան տուր“։ Զինուորը յանձնեց նրան իր ճանապարհորդական ջրշիշը, և կալանաւորը խմեց այն ջուրը, որը տուեց նրան մի մարդ, որի հետ մի քիչ առաջ հրացանով էր խօսում։ Յետոյ նա խնդրեց, որ ձեռքերը մէջքի փոխարէն կրծքի վրայ կապեն, որպէսզի կարողանայ աւելի յարմար կերպով պառկել, և զինուորները շտապով կատարեցին նրա խնդիրը։ Ապա մեծաւորը հրամայեց ճանապարհ ընկնել, մնաս բարով ասելով Մաթէօյին, որը նրան չպատասխանեց։

Մօտ տասը րոպէ էր անցել նրանց հեռանալուց, երբ Մաթէօյի բերանը բացուեց։ Երեխան անհանգիստ հայեացքով մէկ մօրն էր նայում, մէկ հօրը, որը հրացանի վրայ յենուած գիտում էր որդուն՝ ճնշուած զայրոյթով։

— Դու լա՛ւ ես սկսում, ասաց վերջապէս Մաթէօն հանգիստ ձայնով, բայց այնպիսի մի եղանակով, որը կը սարսափեցնէր նրան ճանաչողին։

— Հայրի՛կ... գոչեց երեխան՝ արցունքոտ աչքերով գնալով դէպի հայրը, կարծես նրա ոտքերը ընկնելու համար, բայց Մաթէօն բղաւեց. „Հեռո՛ւ ինձնից“, և երեխան մնաց լացակմած, մի քանի քայլ հեռու հօրից։

Ջիւզէպպան մօտեցաւ։ Նա նկատեց ժամացոյցի շղթայի ծայրը, որ Փօրտունատտօյի գրպանից դուրս էր ընկել։

— Ո՞վ տուեց քեզ այդ ժամացոյցը, հարցրեց նա զայրացկոտ ձայնով։

— Մեր ազգական մեծաւորը։

Մաթէօն խլեց ժամացոյցը և այնպէս ոչ-ժեղ կերպով խփեց քարին, որ հազար կտոր եղաւ։

— Կին, ասաց նա, ի՞նձնից է այս տղան։

Ջիւզէպպայի մոյգ այտերը ամօթից կրակի պէս կարմրեցին։

— Ի՞նչ ես ասում, Մաթէօ. դու լաւ գիտես, թէ ում հետ եմ խօսում։

— Ուրեմն սա առաջին երեխան է մեր տոհմի մէջ, որ մատնութիւն գործեց։

Փօրտունատտօյի լացն ու հեծկլտանքը աւելի սաստկացան, իսկ Մաթէօն բոլոր ժամանակ սևեռել էր իր հայեացքը նրա վրայ։ Վերջապէս նա հրացանի կոթով գետնին խփեց, ձգեց հրացանը ուսին և հրամայեց որդուն, որ հետևի իրեն։ Երեխան հնազանդեց։

Ջիւզէպպան վազեց Մաթէօյի յետևից և բռնեց նրա ձեռքը. „Սա քո որդին է“, ասաց նա դողդողուն ձայնով, գցելով իր սև աչքերը մարդու աչքերին, կարծես ուզում էր իմանալ, թէ ինչ է կատարուում նրա հոգում։

— Թո՛ղ ինձ — պատասխանեց Մաթէօն — ես նրա հայրն եմ։

Ջուիզէպպան գրկեց որդուն և հեկեկալով յետ մտաւ խրճիթը։ Նա ընկաւ Աստուածամօր պատկերի առջև և ջերմեռանդ աղօթում էր։ Այդ միջոցին Մաթէօն երկու հարիւր քայլի չափ հեռացել էր տնից և կանգ էր առել մի փոսի մօտ։ Այդտեղ հրացանի կոթով նա մի քիչ փորեց հողը և գտաւ, որ փափուկ է և փորելու համար յարմար։

— Փօրտունատտօ, գնա՛ կանգնիր այն մեծ քարի մօտ։

Երեխան արաւ, ինչ որ հրամայուած էր, և ծունկ չոքեց։

— Ասա՛ քո աղօթքները։

— Հայրի՛կ, հայրի՛կ, ինձ մի սպանիր։

— Ասա՛ քո աղօթքները, կրկնեց Մաթէօն խիստ ձայնով։

Երեխան հեկեկալով մրմնջաց „Հայր մերը“ և „Հաւատամքը“։ Մաթէօն իւրաքանչիւր աղօթքի վերջը ասում էր ուժեղ ձայնով՝ „ամէն“։

— Ուրիշ աղօթք չգիտե՞ս։

— Հայրիկ, գիտեմ էլի „Աւէ-Մարիան“ և „Աղթանքը“, որ հօրաքոյրս է սովորեցրել։

— Դա շատ երկար է, բայց ոչինչ, աղօթիր։

Երեխան վերջացրեց „Աղթանքը“ նուազուն ձայնով։

— Վերջացրի՞ր։

— Ա՛խ, հայրիկ, խղճա՛ ինձ, ների՛ր ինձ։ Ես այլևս այդպիսի բան չեմ անի։ Ես կը խնդրեմ հօրեղբօրս, որ ներեն Ջիանէտտօյին։

Նա դեռ խօսում էր։ Մաթէօն լցրեց հրացանը և վեր բարձրացնելով ասաց նրան. „Աստուած ներէ քեզ“։ Երեխան մի յուսահատական շարժում գործեց վեր կենալու և հօր ծնկները գրկելու համար. բայց այլևս ուշ էր։ Մաթէօն կրակ տուեց, և Փօրտունատտօն գլորուեց գետնի վրայ։

Առանց մի հայեացք գցելու դիակին, Մաթէօն քայլերը ուղղեց դէպի տուն, որպէսզի մի թիակ բերի որդուն թաղելու համար։ Հազիւ մի քանի քայլ էր արել, երբ նրան դիմաւորեց Ջիւզէպպան, որը հրացանի ձայնից սարսափած՝ վազել էր դուրս։

— Ի՞նչ գործեցիր դու, գոչեց նա։

— Արդարութիւն։

— Ո՞ւր է նա։

— Փոսի մէջ։ Գնում եմ նրան թաղելու։ Նա մեռաւ քրիստոնիայի պէս։ Ես նրա համար պատարագ անել կը տամ։ Գնա՛ ասա փեսայ Թէօդոր Բիանչիին, որ գայ մեզ մօտ ապրի։